

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՊԱՏՐԱՍ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՀԱՅԱԴՈՒԼԸ ՆՈՅՆԻՍԿ ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼԻ 9-Ը



Րաֆֆի Յովհաննիսեան Ազատութեան հրապարակի վրայ հացադուլ կը կատարէ: Կողքին իր երիտասարդ համակիրները

Հայաստանի նախագահական ընտրութիւններու պաշտօնական արդիւնքները վիճարկող թեկնածու՝ Րաֆֆի Յովհաննիսեան Ազատութեան հրապարակի վրայ, ուր յայտարարած է հացադուլ, կրկին անգամ պնդեց, որ պատրաստ է նախագահ Սերժ Սարգսեանի հետ քննարկել բոլոր հարցերը, սակայն՝ նոյն հրապարակի վրայ միայն:

Ընդդիմադիր գործիչը աւելցուց, որ նախագահի նստավայր կ'երթայ, «միայն որպէս հայ ժողովրդի ընտրուած ներկայացուցիչ»:

Ան յայտարարեց, որ պատրաստ է հացադուլը շարունակել նոյնիսկ մինչեւ Ապրիլ 9-ը՝ նոր նախագահի երդումի օրը:

Անցնող շաբթուայ ընթացքին Յովհաննիսեան դարձեալ այցելեց շրջաններ, ուր ժողովուրդի հետ ունեցած իր հանդիպումներէն մէկուն ընթացքին յայտարարեց,

որ պատրաստ է համաձայնելու նոր ընտրութիւններու եւ կամ երկրորդ փուլի:

«Ազգային համաձայնութիւնը, միասնական ազգը հնարաւոր է միմիայն իրաւական, սահմանադրական ընտրութիւնների միջոցով: Հայ ժողովրդի մեծ մասը ունի այն տեսակէտը եւ ունենք ապացոյցները, փաստերը, ցոյց տալու համար, որ հերթական անգամ ընտրութիւնները խեղուեցին, գողացուեցին, եւ չի կարելի հիմա հռետորաբանութեան համար ասել, որ [Սերժ Սարգսեանը] ընտրուած նախագահ է: Ներկայ դրութեամբ եթէ ընտրուած նախագահ կայ, դա պարոն Սարգսեանը է: Բայց ես ունեմ այնքան համեստութիւն՝ չասելու համար յաջորդ նախադասութիւնը: Ասում եմ, որ ժողովրդի մեծ մասի կարծիքն այն է, որ մէկ ուրիշն է ընտրուած նախագահ,

Շաբ.ը էջ 4

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ Է ՍԱՐԳՍԵԱՆ-ՓՈՒԹԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Սերժ Սարգսեան եւ Վլատիմիր Փութին Մոսկուայի մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան, վերընտրուելէ ետք առաջին այցելութեամբ ուղղուեցաւ Մոսկուա, ուր Մարտ 12-ին պաշտօնական հանդիպում ունեցաւ իր ուսու պաշտօնակից Վլատիմիր Փութինի հետ, անոր՝ մայրաքաղաքէն դուրս գտնուող նստավայրին մէջ:

Սարգսեանի համաձայն, վերընտրուելէ ետք առաջին այցելութեամբ՝ Ռուսիա ուղեւորուելը զարմանալի չէ, նկատի առնելով երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող ռազմավարական յարաներութիւնները: «Մենք բացառիկ արդիւնքներու հասած ենք բոլոր ոլորտներուն մէջ եւ

յառաջընթաց արձանագրուած է ռազմական մարզէն ներս, մեր վերջին հանդիպումէն ետք», - ըսած Սարգսեան եւ Փութինին հրաւիրեց այցելելու Հայաստան:

Ռուսիոյ նախագահը իր կարգին նշում կատարած է երկկողմանի առանձնալատուկ յարաբերութիւններուն: «Մենք ունինք մեծ, հեռանկարային, լաւ համատեղ ներդրումային ծրագրեր: Մեր մօտ շատ հայեր կան, անոնք մեր երկրի օրինապահ, ստեղծագործ եւ աշխատող քաղաքացիներն են», - ըսած է Փութին:

Երկու նախագահներու հանդիպումը տեւած է մօտ 1 ժամ, հանդիպման աւարտին որեւէ փաստաթուղթ չէ ստորագրուած:

ԱՆՐԻ ՌԵՆՕ,- «ՈՐԵՒԷ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐԵԼԻ Է ՓՈՒՍԵԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ»

Ֆրանս-գերմանական ընդհանուր պատմութեան դասագիրքը, մեծ հաւանականութեամբ, 50-ամեայ երկկողմ յարաբերութիւններու վերջնակէտն է, քան՝ սկզբնաւորութեան օղակը: Այս մասին, Մարտ 11-ին Երեւանի մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին յայտարարած է Հայաստանի մօտ Ֆրանսայի դեսպան Անրի Ռենօ:

«Այդ դասագիրքը ստեղծած են ֆրանսացի եւ գերմանացի երիտասարդները: Անոնք նաեւ օգնութեան համար դիմած են պատմաբաններու: Դասագիրքը նպատակ չունի դասեր տալ Հայաստանին, այն պարզապէս կրնայ ընդունուիլ որպէս հաշտութեան օրինակ», - ըսած դեսպանը:

Հարցին, թէ ինքը նկատի ունի հայ-ատրպէյճանական, թէ՞ հայ-թրքական հաշտութիւնը, Ֆրանսացի դիւանագէտը պատասխանած է, որ այդ մասին աւելի լաւ պէտք է իմանայ հայ ժողովուրդը: «Որեւէ ժամանակ կարելի է փոխել



Հայաստանի մօտ Ֆրանսայի դեսպան Անրի Ռենօ

պատմութեան ընթացքը: Երկարատեւ թշնամանքէն յետոյ կարելի է անցնիլ փոխըմբռնման եւ համագործակցութեան: Ձեր սերունդն է որ, պէտք է հաշտութեան ուղի գտնէ ձեզի հետ թշնամութիւն ընող կողմերու հետ», - խօսքը ուղղելով Երեւանի Պետական Համալսարանի ուսանողներուն ըսած է Ֆրանսայի դեսպան Անրի Ռենօ:

ՍԱՀԱՅԱՒ ՆԿԱՐԻՉ ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆ

89 տարեկան հասակին Երեւանի մէջ մահացաւ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական նկարիչ Յակոբ Յակոբեան:

ՀՀ ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր, ՀԽՍՀ Գերագոյն Խորհուրդի պատգամաւոր (1967-1971) Յակոբ Յակոբեան 2001-ին ստացած է Երեւանի պատուաւոր քաղաքացիի կոչում:

1923 թուականին Ալեքսանտրիա (Եգիպտոս) ծնած նկարչի մասին Հայաստանի մէջ առաջին անգամ տեղեկացած էին միայն 1960-ին, երբ ան Հայաստանի պետական պատկերասրահին նկար նուիրած էր, որու մասին անդրադարձած էր մամուլը:

1962-ին Յակոբեան ընտանիքով հայրենադարձած էր Հայաստան:

Նկարիչը իր մասնագիտական կրթութիւնը ստացած է Գահրէի գեղարուեստի եւ փարիզի «Կրան Շոմիէ» ակադեմիաներէն



Ժողովրդական նկարիչ Յակոբ Յակոբեան

ներս: Յակոբեանի յայտնի գործերէն են՝ «Կինը խոհանոցին մէջ», «Դերձակը», «Սիւտորներ», «Վիշտ» եւ այլ յայտնի աշխատանքներ:

Նշանաւոր նկարչի մահուն անթիւ Յակոբեաններու ընտանի-

Շաբ.ը էջ 4

ՊԵՏՔ ԶԷ ԶԱՍՈՋՈՒԱԾ ԼԻՆԵԼ, ՈՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՆ ՄԻԱՅՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Սերժ Սարգսեանի մոսկովեան այցի ընթացքում անվտանգութեան, պաշտպանական ոլորտի խնդիրն ամենայն հաւանականութեամբ լինելու է ՌԴ նախագահ Փութինի հետ հանդիպման առանցքային թեմաներից մէկը: Պատճառը միայն այն չէ, որ պաշտպանական, անվտանգութեան բնագաւառում Ռուսաստանը ունի Հայաստանի թիւ մէկ գործընկերը կամ ռազմավարական դաշնակցի կարգավիճակ: Եւ ոչ էլ այն, որ Սերժ Սարգսեանը 2013 թրուականի Յունուարի 15-ին ՊՆ-ում տեղի ունեցած ընդլայնուած խորհրդակցութեան ընթացքում ամրագրել է այդ կարգավիճակը նաեւ ապագայի համար:

Անվտանգութեան, պաշտպանական բնագաւառում կովկասում, մասնաւորապէս Հայաստանում եւ դրա շուրջ, տեղի են ունենում հետաքրքրական զարգացումներ: Հայաստանի հանդէպ մեծանում է արեւմտեան հետաքրքրութիւնը: Երբ Սեպտեմբերին Երեւանում պէտք է տեղի ունենար ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի խոշորամասշտաբ զորավարժութիւն եւ հնարաւոր էր ՀԱՊԿ ոչ պաշտօնական վեհաժողով, յանկարծ պարզուեց, որ այդ օրերին տարածաշրջան, այդ թւում Հայաստան է ժամանելու ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղար Անդրեաս Փոզ Ռասմուսենը: Հայաստանը խնդրեց ՀԱՊԿ գործընկերներին զորավարժութիւնը յետաձգել՝ տեխնիկական պատճառով, թէեւ բոլորի համար պարզ էր, որ պատճառն իհարկէ Ռասմուսենի այցն է:

Յետոյ, Հայաստանն արժանացաւ ամերիկեան մի քանի բարձրաստիճան գինուորական պատուիրակներին, հրամանատարների այցին, նաեւ ստորագրուեցին փաստաթղթեր ռազմական արդիւնաբերութեան ոլորտում գործակցութեան վերաբերեալ, ինչը փաստացի հանդիսանում է նաեւ ռազմատեխնիկական գործակցութեան հիմք:

Արեւմտեան ուշադրութիւնը տարածաշրջանում անվտանգու-

թեան համակարգերի հանդէպ միանգամայն բնական է, քանի որ չի կարող տնտեսա-քաղաքական ուշադրութիւնը չուղեկցուել համարժէք գործողութիւններով պաշտպանական ոլորտում: Առանց դրա, գործընթացը կը լինի կիսատ, անարդիւնաւէտ: Միեւնոյն ժամանակ, հասկանալի է նաեւ, թէ ինչու է Արեւմուտքի ուշադրութեան աճը առաւելապէս արտաթայտում հայկական ուղղութեամբ, Հայաստանի գինուժի մասով: Պատճառն ամենեւին այն չէ, որ հայկական գինուժը համարուում է այսպէս ասած ամբողջապէս «ռուսափրկացուած» եւ կայ այն Ռուսաստանի տոտալ ազդեցութեան եւ վերահսկողութեան տիրոջ ղեկը բերելու անհրաժեշտութիւն: Այդ առումով, ներկայում իրավիճակը զգալիօրէն այլ է, եւ Հայաստանն այդ ենթակայութիւնից դուրս բերելու հարցում զգալի փոփոխութիւններ արդէն իսկ առկայ են, թէեւ իհարկէ դրանք շարունակուում են ընդհանուր տեսակարար կշռում իրենց ծաւալով լինել փոքր:

Գլխաւոր խնդիրը սակայն այն է, որ Արեւմուտքի համար գործընկեր՝ անվտանգութեան եւ պաշտպանական ոլորտում, կարող է լինել միայն հայկական գինուժը, եւ եթէ այդ գինուժի հետ գործընկերային յարաբերութիւն չկայ, ապա որեւէ այլ ռեզիւնայլ պետութեան հետ անվտանգութեան, պաշտպանութեան ոլորտում համագործակցութիւնը չի կարող օգնել լուծել ռազմավարական խնդիրներ:

Բանն այն է, որ Հարաւային կովկասում հայկական բանակն է, որ իր համակարգային բոլոր արատներով հանդերձ, գործնականում ապացուցել է ռազմավարական կարեւոր խնդիրներ լուծելու, ինչպէս նաեւ ռազմա-քաղաքական պլանավորում իրականացնելու շնորհիւ այդ լուծումների կայունութիւնը երաշխաւորելու կարողութիւնը:

Վերջին շրջանում, Հայաստանի ղեկավարութիւնը կարծես

Շաբ.ք էջ 17

ՆՈՐԻՑ «ԱԶԳՈՆՏԻՐ»

ԱՐԱՄ ԱՐԲՆԱՄԵԱՆ

Ես գիտեմ, որ իմ հարցի պատճառով ընդդիմադիրները եւ նրանց ընտրագանգուածի ներկայացուցիչները «վրայ կը տան», բայց իմ գործը հարցեր տալն է. ինչի՞ վրայ է հիմնուած Բաֆֆի Յովհաննիսեանի վստահութիւնը, որ հենց նա է ընտրուել Հայաստանի Հանրապետութեան նախագահ: Որ ընտրութիւններն անցել են խախտումներով, կեղծիքներով, այդ գործընթացին «աւանդաբար» յատուկ այլանդակութիւններով, որ տեղամասային թուերի տրամաբանական վերլուծութիւնը մեծ կասկածների տեղիք է տալիս, որ ԿԸՀ-ի յայտարարած արդիւնքները, ինչպէս միշտ, արժանահաւատ չեն թւում՝ այդ ամէնը ճիշտ է, եւ դրա բազմաթիւ հաստատումները կան նաեւ մեր թերթում եւ կայքում: Որ իշխանութիւնը մատը մատին չի խփում՝ պատժելու ընտրայնացագործներին, նոյնպէս փաստ է: Բայց նոյնիսկ այդ ամէնը հաշուի առնելով՝ կարո՞ղ է արդեօք պաշտօնական արդիւնքներով երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածուն իրեն հռչակել հանրապետութեան նախագահ, թէ՛ «Վազգէն, նախագահ», «Ստեփան, նախագահ», «Լեւոն, նախագահ» եւ «Բաֆֆի, նախագահ» կարգախօսները գոտ հոգեբանական նշանակութիւն ունեն: Պարզ է, որ հասարակ մարդիկ կը բերեն հետեւեալ փաստարկը՝ «բազու չգիտե՞ս, որ սաղ ժողովուրդը Բաֆֆիին է ընտրել, ինչքան հարեւան-բարեկամ ունեմ՝ Բաֆֆիին է ձայն տուել»: Շարքային քաղաքացիներից աւելի լուրջ փաստարկներ չեն էլ պահանջուում: Բայց քաղաքական գործիչներից սպասելի են աւելի խորը հիմնաւորումներ: Ընդ որում, անձամբ ես այնքան եմ մարդկայնօրէն համակրում Բաֆֆի Յովհաննիսեանին, որ եթէ նա կամ «Ժառանգութեան» յայտնի գործիչները ինձ ցոյց տան մի փաստաթուղթ, որից անմիջապէս հետեւում է, որ Բաֆֆին ստացել է ընտրողների, ասենք, 65, 81 կամ 100 տոկոսի ձայները, ես չեմ էլ ստուգելու այդ թուղթը,

պարզապէս կը հաւատամ նրանց: Բայց քանի որ նման թուղթ չկայ, գուցէ կարելի է ասել՝ ոչ թէ «ես ընտրուել եմ», «ես ազգընտիր եմ» («Ազգոյ»՝ ինչպէս ասում էին Ստեփան Դեմիրճեանի ժամանակ), այլ՝ «ընտրութիւններն անցել են այնպէս, որ դրանց պաշտօնական արդիւնքները չեն կարող արժանահաւատ համարուել»: Դա նաեւ ընդդիմութեանը որոշակի մաների տեղ կը տայ: Հակառակ դէպքում ընդդիմութեան առաջնորդն ինքն իրեն դնում է փակուղային իրավիճակի մէջ՝ ես ընտրուել եմ, բերէք իմ գահը: Կամ՝ վերջին տարբերակով՝ ես նախագահ եմ ընտրուել, իսկ հիմա կը գոհուեմ, խարակիրի կ'անեմ՝ դա ապացուցելու համար: Վստահ չեմ, որ դա քաղաքական օրակարգ է: Ինքնին հացադուլը գուցէ եւ ուշադրութիւն գրաւելու եւ պայքարելու միջոց է (չնայած մօտ 10 օր առաջ նոյն Բաֆֆի Յովհաննիսեանն ասաց, որ Ազատութեան հրապարակում այլեւս ոչ մի տառապանք, ոչ մի հացադուլ չի լինի): Բայց նախ՝ պէտք է խօսել զոհերի, դիակների մասին: Երկրորդ՝ այդ անհատական ինքնագոհութեան քայլը պէտք է գուզակցել քաղաքական քայլերի հետ: Օրինակ՝ ինչպէս որ դա առաջարկում է «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը, կոչով դիմել ԱԺ-ում՝ իրենց ընդդիմադիր համարող պատգամաւորներին՝ վայր դնել մանդատները: Հետաքրքիր է, ո՞վ է այդ կոչին անսալու: «Յամենայնդէպս, յիշեցնեմ նաեւ, որ Մահաթմա Գանդիին ոչ նախագահ էր, ոչ էլ նախագահի թեկնածու, եւ նա հացադուլով ոչ մէկի հրաժարականը չէր պահանջում: Նրա հացադուլները գոտ բարոյական քայլեր էին եւ ուղղուած էին իր երկրում ազգամիջեան բախումները կանխելուն:

«ԱՌԱՒՕՏ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱՌԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍԵԱՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԻՆՏՐԻԳՐ

ԴԱԻԻԹ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Սերժ Սարգսեանը հրամանագիր է ստորագրել Միքայէլ Մինասեանին՝ իր փեսային, Վատիկանում ՀՀ դեսպան նշանակելու մասին: Այս հնարաւոր նշանակման մասին մամուլում օրեր առաջ հրապարակումներ էին եղել, սակայն որ այդ «արմատական» նշանակումը այսչափ օպերատիւ կը լինի, մի տեսակ անսպասելի էր: Փաստօրէն, Սերժ Սարգսեանը նպատակադարձար չի գտել անգամ սպասել մինչեւ Ապրիլի 9-ը՝ իր երդմանակալութիւնը: Միքայէլ Մինասեանը հրապարակային գործիչ չէր, սակայն համարուում էր իշխանական համակարգի ամենաազդեցիկ գործը կարգիւնը: Ստեղծուել էր հանրային ստերիոտիպ, որ նա ազդեցութեան հզոր լծակներ ունի կառավարական եւ տնտեսական տարբեր ոլորտներում, միաժամանակ համարուում էր մեղիա դաշտի հզորագոյն մագնատը: Ըստ լրատուամիջոցների հրապարակումների՝ Միքայէլ Մինասեանին են պատկանում «Արմնյուզ» հեռուս-

տալիկերութիւնը-100% բաժնեմասը, «Արմենիա» եւ «Ա Թի վի» հեռուստատալիկերութիւնների բաժնետոմսերի հսկիչ փաթեթը, ինչպէս նաեւ մի քանի յայտնի ինտերնետային կայքեր ու թերթեր: Յամառօրէն լուրեր էին պտուում, որ նա բաժնեմասեր ունի նաեւ «Շանթ» հեռուստատալիկերութիւնում: Բացի այդ՝ Հանրային հեռուստալիկերութիւնը նոյնպէս անուղղակիօրէն վերահսկում էր Միքայէլ Մինասեանի կողմից, ով համակարգում էր Հ1-ի բոլոր կարեւոր օղակների ազդեցիկ դէմքերի նշանակումն ու գործունէութիւնը: Ակնյայտ է, որ հեռանալով Հայաստանից՝ Միքայէլ Մինասեանը որոշակիօրէն կը կորցնի իր ունեցած ազդեցութիւնը տեղական իրադարձութիւնների վրայ: Այդքանով հանդերձ միանշանակ դժուար է ասել, թէ որն է այս նշանակման հեռահար նպատակը:

Մի կողմից՝ սա կարող է նշանակել, որ Սերժ Սարգսեանը որոշակի դժգոհութիւններ է ունեցել, Վատիկան ուղարկելով՝ պատժել է Միքայէլ Մինասեանին՝ նրան

«ՀԱՅԵԼԻ»

ՐԱՅԱՍՏԱՆ

ԶԱՐՈՒՅԻ ՓՈՍՏԱՆՁԵԱՆ.- «ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԻՈՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՅԱՄԱԼՐԵԼ ՅԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՇԱՐՔԵՐԸ

Սահմանադրական Դատարանի ներկայացուած հայցի փաստացի հիմնաւորումները նրանք են, որ Րաֆֆի Յովհաննիսեանի անունից տարած քային ընտրական յանձնաժողովներ ներկայացուած ոչ մի դիմումի ընթացք չի տրուել: Այդ մասին Սահմանադրական Դատարանում Մարտի 12-ին, լրագրողների հետ զրոյցում նշել է նախագահի նախկին թեկնածու Րաֆֆի Յովհաննիսեանի շահերի ներկայացուցիչ, խորհրդարանական «Ժառանգութիւն» խմբակցութեան քարտուղար Զարուհի Փոստանջեանը:



Ազգային ժողովի անդամ Զարուհի Փոստանջեան

Նա հրաժարուել է մեկնաբանել ԿԸՅ-ի դեկավար Տիգրան Մուկուչեանի եւ գործող նախագահ Սերժ Սարգսեանի շահերը ներկայացնող ՀՀ ԱԺ պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանի արտայայտութիւնները հայցերի անբովանդակ լինելու վերաբերեալ: Մինչդեռ, ըստ Փոստանջեանի՝ ԿԸՅ-ն իրաւասու է սեփական նախաձեռնութեամբ վարչական գործ յարուցել, եթէ որոշակի կասկածներ կան: «Բոլորին յայտնի է, թէ որքան վարչական գործեր էին վերցուել, այն էլ՝ նախընտրական ժամանակահատուածում: Ինչպէ՞ս ստացուեց, որ ԿԸՅ-ն անվստահութեան մթնոլորտի պայմաններում ոչ մի վար-

չական գործ չարուցեց: Ինչպէ՞ս ստացուեց, որ ոչ մի տարած քային ընտրական յանձնաժողով չդիտարկեց ոչ մի գործ: Աւելին, ԿԸՅ-ի իրաւաբանը հրահանգել էր, որպէսզի ընտրատեղամասերում ընթացք չտան Րաֆֆի Յովհաննիսեանի յայտարարութիւններին», - ասել է Զարուհի Փոստանջեանը:

Ի պատասխան հարցին, թէ ՄԴ-ն կ'օգտուի արդեօք հնարաւորութիւնից եւ կը կայացնի իրենց համար դրական դատավճիռ, Փոստանջեանը նշել է, - «Կարծում եմ, որ ՄԴ-ն պէտք է օգտուի այդ հնարաւորութիւնից կամ էլ նրա անդամները կը համալրեն յանցագործներ շարքերը»:

ԸՆՏՐԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԿԱՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԶԱՅՆՈՒՄ ԵՆ ԸՆՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Փետրուարի 18-ի նախագահի ընտրութիւնների կապակցութեամբ Յատուկ Քննչական Ծառայութիւնը (ՀՔԾ) քննում է 5 քրէական գործ: ՀՔԾ-ից «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին, որ գործերից մէկն առնչուում է Արտաշատի դէպքերին, երբ ընտրութիւնների օրը 17/5 ընտրատեղամասում արձանագրուել էր հարիւրաւոր քուէաթերթիկների լցոնման դէպք:

Այս գործով վկայ է «Իրաւունքի Եւրոպայի Միակերպութեան» հասարակական կազմակերպութեան ղեկավարը, «Թրանսփարենսի Ինթերնէյշնալը» հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչ Նարինէ Իսմայիլի:

«Իմ բառերը փոխում են, ու՛զուում են համոզել, որ այդպիսի բան չի եղել, անկարելի է, որ ես տեսած լինէի դա, որպէսզի չուենան իրա-

կանութիւնը եւ չկարողանան կատարողներին պատժել», - ասում է ազգութեամբ հայ, ԱՄՆ-ի քաղաքացի 21-ամեայ Իսմայիլին:

Մարտի 1-ին, երբ կրկին, ըստ Նարինէ Իսմայիլի, ՀՔԾ-ում չեն արձանագրուել իր ցուցմունքները նոյնութեամբ, Իսմայիլի փաստաբան Տիգրան Եգորեանը փորձել է ձայնագրել հարցաքննութիւնը: Քննիչ Գորիկ Յովակիմեանն արգելել է ձայնագրել:

Իսմայիլիի համար այս իրավիճակը, մեղմ ասած, անսպասելի է եղել. - «Վախեցած էի, ազրեսիւ մթնոլորտ էր, ՀՔԾ-ի պետը հոգեբանօրէն ուզում էր ձնշել ինձ, որպէսզի կարծէի, որ վտանգի մէջ էի կամ իմ խօսքերս ճիշդ չէին, պէտք է դուրս գայի ու չխօսէի այդ մասին: Լցոնումից յետոյ ոչ էլ զարմանալի էր», - պատմում է նա:

ԵՐԵՎԱՆԻ ԱԲԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԲՅԿ-Ի ՅԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԸ ԿԸ ԳԼԽԱԲՈՐԻ ՕՍԿԱՆԵԱՆԸ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան քաղաքական խորհրդի ընդլայնուած նիստը որոշում է կայացրել մասնակցել Երեւանի աւագանու ընտրութիւններին եւ համամասնական ցուցակը գլխաւորելու է ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր, ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանեանը: Այս մասին ասաց ԱԺ ԲՀԿ-ական պատգամաւոր Նաիրա Զոհրաբեանը:

Հարցին, թէ ի՞նչ ընթացք են ունենալու քաղաքական խորհրդակցութիւնները «Ժառանգութեան» եւ Դաշնակցութեան հետ հնարաւոր դաշինքով ընտրութիւններին մասնակցելու շուրջ, Զոհրաբեանը պատասխանեց. «Այո մենք մշտապէս խօսել ենք եւ կուսակցութեան նախագահ Գագիկ Մառուկեանը բազմից իր հրապարակային ելուցումներում խօ-

սել է առաւել լայն կոնսոլիդացիայի մասին: Մենք այժմ էլ պատրաստ ենք: Եթէ կը լինի առաւել լայն համախմբում ԲՀԿ-ի առանցքի շուրջ, մենք պատրաստ ենք քննարկել այդ առաւել լայն կոնսոլիդացիայով, առաւել լայն դաշինքով Երեւանի աւագանու ընտրութիւններին մասնակցելու հարցը: Յամենայնդէպս մեր համամասնական ցուցակը պատրաստ է եւ մենք մասնակցելու ենք ընտրութիւններին ունենալով յողթանակի նշածող»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան քարտուղարը, սակայն, ընդգծեց, որ այդ ցուցակում «առանցքային տեղը» պէտք է պատկանի ԲՀԿ-ին, եւ այն պէտք է գլխաւորի Վարդան Օսկանեանը:

ԲՅԿ-Ն «ՍԱԴՐԱՆՔ» Է ՈՐԱԿՈՒՄ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՔԱՅԼԵՐԸ

Ազգային ժողովում իշխող Հանրապետական կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Յովհաննէս Սահակեանի կարծիքով, փետրուարի 18-ի նախագահական ընտրութիւնների արդիւնքները վիճարկող ընդդիմադիր առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանի քայլերը տանում են սրացման:

«Րաֆֆիի քայլերին եթէ նայենք, թէ եւ բարեւի, բարութեան մասին է խօսում, սակայն տանում է սադրանքի, տանում է ապակայունացման, սրացման», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում մեկնաբանելով Ազատութեան հրապարակում հրաւիրուած հանրահաւաքում Րաֆֆի Յովհաննիսեանի ելուցումը եւ հացադուլ սկսելու մասին յայտարարութիւնը, նշեց Սահակեանը, - «Ինչ վերաբերում է հացադուլին, ապա դա շանտաժ է, վերջնագրի լեզուով խօսել է, որը անընդունելի է: Եթէ ինչ-որ մէկը ասում է՝ իմ դիակի վրայով, դա հայ քաղաքացու,

ժողովրդավարութիւնից խօսող մարդու մտածելակերպ չէ, սա տանում է սրացման: Պէտք է կտրուկ միջոցներ ձեռնարկուեն, քանի որ չենք կարող պետութիւնը վերածել անարխիայի, երբ իւրաքանչիւր մարդու մտքով ինչ հակաօրինական, հակասահմանադրական քայլ անցնի՝ իրականացնի»:

Հարցին, թէ ինչ են նշանակում կտրուկ միջոցները, Յովհաննէս Սահակեանն ասաց, թէ իշխանութիւնները առաջօր հանդուրժող են եղել, եւ թոյլ են տուել առանց օրէնքով նախատեսուած կարգով իշխանութիւններին իրագեկելու հանրահաւաքներ անցկացնել ինչպէս մարզերում, այնպէս էլ Երեւանում:

«Այսուհետեւ չպէտք է ընդառաջ գնալ Րաֆֆի Յովհաննիսեանի սադրանքներին», - յայտարարեց Սահակեանը, նշելով, որ Յովհաննիսեանին պէտք է «թոյլատրել իրականացնել իր քայլերը միայն օրէնքի եւ Սահմանադրութեան շրջանակներում»:

ՏԻԳՐԱՆ ԽՉՄԱԼԵԱՆ. ԱՅՍ ՊԱՅՔԱՐԸ ՐԱՖՖՈՒ ԵՒ ՍԵՐԺԻ ՊԱՅՔԱՐԸ ՉԷ

Այս պայքարը Րաֆֆու եւ Սէրժի պայքարը չէ: Այդ մասին Ազատութեան հրապարակում ընթացող հանրահաւաքում յայտարարել է ռեժիսոր, «Սարգարապատ» շարժման նեկայացուցիչ Տիգրան Խզմալեանը:

«Մենք գիտէինք, որ կեղծելու են: Բայց իրենք համոզուած էին, թէ 15 տարուայ մէջ ստրուկ ենք: Մենք ապացուցեցինք, որ ստրուկ չենք, ցոյց տուեցինք, որ ունենք արժանապատուութիւն: Ահա թէ ինչու Րաֆֆիին դիմում ենք անունով, ինչպէս եղբօրը: Ու պէտք է իշխանութիւններին խնդրանքով դիմել՝ հեռացէք: Մեր տուն գողեր են մտել, եւ նրանց հանելու համար կոչ անել պէտք չէ, վրեստել է պէտք», - նշել է նա:

Խզմալեանը նշել է, թէ ինչ է պէտք անել՝ Րաֆֆի Յովհաննիսեանին մենակ չթողնելու համար: «Մենք պէտք է գործենք: Մենք ունենք ընտրուած նախագահ Րաֆֆի Յովհաննիսեան, ու պէտք է հարուած հասցնենք իշխանութեանը, խարխիւնք նրան: Եթէ ԱԺ-ից դուրս գան «Ժառանգութիւնը»,



«Սարգարապատ» շարժման նեկայացուցիչ Տիգրան Խզմալեան

ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն, ո՞վ է մնալու այնտեղ, մնալու է մկների ժողովը: Փետրուարի 18-ին յեղաշրջում է եղել, եւ այսօր մեզ պէտք է վախեցնել յեղաշրջումով: Մենք վերադարձնելու ենք մեր ձայները, դեռեւս գործող Սահմանադրութեան երկրորդ կէտով գրած է՝ իշխանութիւնը Հայաստանում պատկանում է ժողովրդին, եւ իշխանութիւնը կանգնած է այստեղ, այլ ոչ Բաղրամեան 26-ում», - նշել է Տիգրան Խզմալեանը:

ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ ՉԻ ՅԱՍԿԱՆՈՒՄ, ԹԵ ԻՆՉ Է ՈՒՋՈՒՄ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ

Հանրային խորհրդի նախագահ Վազգէն Մանուկեանն ուղղակի գիտի, որ Րաֆֆի Յովհաննիսեանը յայտարարել է հացադուլ, ինչը Հայաստանում շատ ընդունուած երեւոյթ է: «Խաչիկ Ստամբոլցեանից սկսած բազմաթիւ մարդկանց կողմից բազմաթիւ դէպքեր են եղել: Որպէսզի կարողանամ գնահատականներ տալ գործընթացներին, ես պէտք է հասկանամ, թէ ինչ է ուզում Րաֆֆի Յովհաննիսեանը, ինչը ես չեմ հասկանում», - Text.am-ի հետ զրոյցում ասաց Վազգէն Մանուկեանը:

Ազատութեան հրապարակում կատարող իրադարձութիւնների վերաբերեալ Հանրային խորհրդի նախագահ Վազգէն Մանուկեանի գնահատականը մնում է անփոփոխ, ու ասաց, որ աւելացնելու բան չունի: «Հարցրեցիք ներկայ վիճակի մասին, եւ կարող եմ ասել, որ կայ մի

նորութիւն. Րաֆֆի Յովհաննիսեանը յայտարարել է հացադուլ», - ասաց Հանրային խորհրդի նախագահը:

Յիշեցնենք, որ ընտրութիւններից անմիջապէս յետոյ հրաւիրուած մամուլի ասուլիսում Վազգէն Մանուկեանը համոզմունք յայտնեց, որ Րաֆֆի Յովհաննիսեանն այսօր ընտրութեան երկու ճանապարհ ունի ու հնարաւորութիւն: Առաջինը՝ ընդունել եւ չբողբարկել ընտրութեան արդիւնքները, տարբերակ, որ չի եղել Հայաստանում: Եւ տարբերակ երկրորդ՝ գնալ հանրահաւաքների ճանապարհով, ինչը Վազգէն Մանուկեանը Րաֆֆի Յովհաննիսեանի հնարաւորութիւնների ասմաններում ոչ արդիւնաւէտ էր տեսնել, քանի որ կարծում է, որ նա չունի այդ ներուժը: «Կը լինեն հանրահաւաքներ եւ կամաց-կամաց կը մարի կը գնայ», - ասել էր նա:

ԼՈՒՐԵՐ

ԹՈՍԱՍ ԴԵ ՎԱԱԼ.- «ՇԱՏ ԴԺԳՈՐՆԵՐ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԹՆԱՑԱՆ»

«Քաղաքական ցնցումները կովկասում» վերնագրած իր յօդուածում բրիտանացի ճանաչուած փորձագէտ Թոմաս դե Վաալը վերլուծում է տարածաշրջանի երեք երկրներում ստեղծուած քաղաքական իրավիճակը՝ նշելով, որ երեք երկրներում էլ թէ թէ ասպանով իշխող ռեժիմները բախուած են վերածնուած հանրային բողոքի:



Բրիտանացի փորձագէտ Թոմաս դե Վաալ

Այս երկրներից իւրաքանչիւրը 1990-ականներին քաղաքական մեծ ցնցումներ են տեսել, սակայն շատ տարիներ թուում էր, որ մարդիկ այլեւս չեն հաւատում, որ կարող են մասնակից լինել հանրային կեանքին, եւ համաձայն են հանդուրժել իւրաքանչիւր դեկավարի, ով կ'երաշխաւորէր որոշակի կայունութիւն: Սակայն սա այլեւս չի գործում, նինջի տեւական շրջանից յետոյ քաղաքականութիւնը վերադարձել է, գրում է դե Վաալը:

Այժմ ուշադրութեան կենտրոնում է փոքրիկ Հայաստանը, որտեղ կայացել են նախագահական ընտրութիւններ եւ գործող նախագահ Սերժ Սարգսեանը վերընտրուել է: Սարգսեանի հեշտ յաղթանակը կանխորոշուած էր, քանի որ նրա երկու ենթադրեալ մրցակիցները դուրս մնացին պայքարից: Սակայն քարոզարշակի վերջին երկու շաբաթների ընթացքում ընդդիմադիր թեկնածու, անկախ Հայաստանի առաջին արտգործնախարար Բաֆֆի Յովհաննիսեանը առաջընթաց արձանագրեց:

Իրականում շատ դժգոհներ Հայաստանում արթնացան, սակայն շատ ուշ էր ընտրութիւններում իրավիճակը փոխելու համար, եթէ քարոզարշակը երկու շաբաթ աւելի շարունակուէր, շատ հնարաւոր է, որ Յովհաննիսեանի սկսած շարժումը նրան դուրս բերեր երկրորդ փուլ, գրում է Թոմաս դե Վաալը:

Յիշեցնենք, որ ընտրութիւնները կարող էին երկու շաբաթով յետաձգուել, եթէ յարձակման հետեւանքով հրազենային վնասուածք ստացած թեկնածու Պարոյր Հայրիկեանը Սահմանադրական Դատարանից իր դիմումը վերջին պահին հետ չվերցնէր:

Դե Վաալը իր յօդուածում նշում է, որ Սերժ Սարգսեանին շնորհաւորել են աշխարհի առաջնորդները, այդ թւում եւ Միացեալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման, իսկ Պետդեպարտամենտն ընդհանուր առմամբ ընտրութիւնները լաւ կազմակերպուած է որակել:

Հայաստանի ինդիւրները այնքան ընտրութիւնների օրուայ հետ չեն կապուած, որքան՝ ընդհանուր իրավիճակի: Մամուլը իստորեն վերհասկում է կառավարութեան կողմից: Տեղական ղեկավարները ծառայում են նեղ իշխող վերնախաւին, այլ ոչ պետութեանը, եւ ԱԶԿ-ի դիտորդական առաքելութեան ղեկավար Հայրի թալիալիին այս մասին էր ասում, երբ յայտարարում էր, որ պետութեան եւ իշխող

կուսակցութեան միջեւ սահմանները յստակ չեն:

Բաֆֆի Յովհաննիսեանը պարկեշտ մարդ է, ով կեղտոտուած է յետխորհրդային քաղաքական գործիչներին յատուկ կոռուպցիոն գործունէութեամբ, գրում է Թոմաս դե Վաալը: Սակայն նա նաեւ կալիֆորնիայում ծնուած լինելով՝ իւրային էր համարում եւ քչերն էին պատկերացնում, որ նա կարող է Հայաստանի նախագահ լինել: Ակնյայտ է, որ նա կարողացել է մոբիլիացնել աւելի մեծ ընդդիմադիր զանգուած, քան իր ընտրագանգուածն է, գրում է փորձագէտը:

Դե Վաալը գրում է, որ Յովհաննիսեանը չի ընդունում ընտրութիւնների արդիւնքները եւ զարմանալիօրէն արդիւնաւէտ ամբողջ երկրում հանրահաւաքներ է կազմակերպում: Սակայն դժուար է հասկանալ, թէ ինչպէս նա կարող է կարճ ժամանակահատուածում գերազանցել նախագահ Սարգսեանին, ով այժմ միջազգային լեզուի միջոցով ունի եւ վերահսկում է իշխանութեան բոլոր լծակները:

Մինչդեռ աւելի երկարաժամկէտ հեռանկարում նախագահը ինդիւր ունի. սոցիալական հարցումները ցոյց են տալիս, որ Հայաստանում մեծ է հասարակութեան դժգոհութիւնը կոռուպցիայից, աղքատութիւնից եւ իշխանութեան չարաշահումից, դա արտայայտուած է միջակ տնտեսական ցուցանիշներով եւ ուղեղների արտահոսքով: Սարգսեանը փոխգիշման ընդունակ մարդ է, ով կարող է առնուազն ականջալուր լինել իր հակառակորդներին, եւ եթէ նա չի ցանկանում, որ իր երկրորդ ժամկէտը շատ խորզուբորդ լինի, այժմ պէտք է մտածի, թէ ինչ քայլեր պէտք է կատարի, որ մարդկանց դժգոհութիւնը վերացնի: Միեւնոյն ժամանակ, նա հասկանում է, որ գործող համակարգին միջամտութիւնը կարող է աւարտուել իր իշխանութեան վախճանով:

Կովկասեան քաղաքականութեան անցած տարուայ դասը, ըստ Թոմաս դե Վաալի, հետեւեալն է. հանրային կարծիքը ոչ թէ մոնոլիտ է, այլ՝ ալիք, դժգոհ տրամադրութիւնները կարող են կուտակուել եւ թափ ստանալ միանգամից եւ շատ յանկարծակի, թուում է՝ գրուից:

ԱՆԻ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է

Կայծակի հարուածի հետեւանքով երկու կէսի բաժանուած Անիի Սուրբ Փրկիչ եկեղեցու վերակառուցման աշխատանքները շարունակում են, գրում է թուրքական «Սաբահ»-ը: Կարս նահանգի Մշակույթի եւ զբոսաշրջութեան վարչութեան պետ Հաքան Դոդանայը նշել է, որ եկեղեցին պատմավայրի 21 կանգուն շինութիւններից մէկն է:



Անիի Սուրբ Փրկիչ եկեղեցին վերակառուցման ընթացքին

Նա նշել է, որ եկեղեցու թափուած քարերը համարակալուել են եւ օգտագործուելու են վերակառուցման աշխատանքների ընթացքում:

Դոդանայը նշել է, որ եկեղեցու վերակառուցման աշխատանքներն աւարտուելու են 2014թ.-ի Նոյեմբերին:

Հաքան Դոդանայի խօսքով՝ 33 մետր եւ 33 սմ բարձրութիւն ունեցող եկեղեցին քրիստոնեաների կողմից սուրբ է համարում: «Եկեղեցին 1954-ին կայծակի հար-

ուածից 2 մասի է բաժանուել: Յուշարձանների համաշխարհային հիմնադրամի եւ Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարութեան կողմից ընթանում է եկեղեցու ամրացման եւ պահպանման աշխատանքներ:

Անի քաղաքը հանդիսացած է Հայոց Բագրատունի թագաւորութեան օրօք Հայաստանի մայրաքաղաք:

ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ԶԱՅ ԼՐԱԳՐՈՂԸ ՉԻ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Թուրքիայի Ստամբուլ քաղաքի դատախազութիւնն աւարտել է հայ լրագրող Սեւան Նիշանեանի դէմ ներկայացուած մեղադրանքի քննութիւնը եւ «ժողովրդի մի մասի կրօնական զգացմունքները վիրաւորելու» համար մինչեւ 1.5 տարուայ ազատազրկում է պահանջում:

Ինչպէս տեղեկացնում է «Ակոս»-ը, Նիշանեանը չի ընդունում իրեն ուղղուած մեղադրանքը եւ պնդում է, որ դատախազութիւնը դիմողները «խօսքի ազատութեան անձանթ» մարդիկ են եղել եւ ինքը դատարանում չի պատրաստուել պաշտպանուել:

«Պաշտպանուել կը նշանակի ճանաչել այս գործի օրինականութիւնը: Ես իմ ասածների տէրն եմ», - ասել է Սեւան Նիշանեանը:

«Երկրում տգէտ մարդիկ շատ կան, աջ ու ձախ ցելի շարժումների թիւը շատ է: Խօսքի ազատութեան անձանթ մարդիկ են եղել բողոքողները: Ես դատախազի երեւակայութեան արդիւնք հանդիսացող մեղադրանքը կարդալու



Պոլսահայ լրագրող Սեւան Նիշանեան

համար ոչ ժամանակ ունեմ, ոչ էլ համբերութիւն: Նման լիմար դատավարութեան ընթացքում էլ չեմ պատրաստուել պաշտպանուել», - յայտարարել է հայ լրագրողը:

Նա նշել է, որ եթէ իրեն 1.5 տարով ազատազրկեն, դա միայն վնաս կը տայ Թուրքիային, քանի որ կ'երեւայ, թէ ինչ մտածելակերպ ունի թուրքական դատարանը:

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԶԱՅԱԴՈՒԼԸ

Շարունակուած էջ 1-էն

բայց ես պատրաստ եմ հիմա լուծում գտնել: Եւ եթէ պարոն Սարգսեանը ուզում է հանգուցալուծել այս վիճակը, ազգային համաձայնութեան իրական հնարաւորութիւն տայ, ես պատրաստ եմ ընդունել նոր ընտրութիւններին կամ երկրորդ փուլի հնարաւորութիւնները», ըսաւ Բաֆֆի Յովհաննիսեան:

Մինչ կը շարունակուի Բաֆֆի Յովհաննիսեանի հացադուլը, անոր

այցելութեան կու գան բազմաթիւ քաղաքական ու հասարակական գործիչներ եւ մտաւորականներ, ինչպէս նաեւ պարզ ժողովուրդ:

Այցելուներու շարքին էին ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեան, «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավարներէն Վարդան Օսկանեան, ՀԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Լեւոն Զուրաբեան եւ Արամ Մանուկեան եւ ուրիշներ:

Լորելով հայրենիք վերադարձող հայի իսկական օրինակը: Նա եկաւ Հայաստան՝ որպէս արդէն ձեւաւորուած՝ անշփոթելի ձեռագիր ունեցող նկարիչ: Նա եկաւ իր եւ մեզ համար բացայայտելու մի նոր՝ յակոբեանական Հայաստան եւ իր մշտական ներկայութիւնն ապա-

հովեց հայ կերպարուեստի պատմութեան մէջ: Խորին ցաւակցութիւն եմ յայտնում ակնաւոր արուեստագէտի ընտանիքին, մերձաւորներին եւ նրա արուեստի բազմահազար երկրպագուներին», - ասուած է նախագահի ցաւակցական հեռագրում:

ՆԿԱՐԻՉ ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

քին ցաւակցական հեռագիր յղած է նախագահ Սերժ Սարգսեան:

«Յակոբ Յակոբեանի վախ-

ճանը մեծ կորուստ է հայ կերպարուեստի եւ մեր ողջ մշակութային ու հասարակական դաշտի համար: Նա եղաւ բացառիկ արուեստագէտ եւ անբասիր քաղաքացի՝ մարմնա-

ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ ՅՈՎՅԱՆՆԻՍԵԱՆԻՆ

«Կարին» աւանդական երգի եւ պարի համոյթի ղեկավար Գագիկ Գինոսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց, թէ որպէս արուեստագէտ սրտացաւ է իր երկրում կատարուող բոլոր իրադարձութիւններին նկատմամբ, նոյնիսկ 2008-ին, դէմ լինելով Լեւոն Տէր-Պետրոսեանին, նա եղել է Ազատութեան հրապարակում:

Իսկ Բաֆֆի Յովհաննիսեանը իր մտերիմն է ու հիմա էլ փորձում է ներկայ լինել բոլոր հաւաքներին. - «Որեւէ քաղաքական յայտարարութիւն չանելով՝ գորակցութիւնս յայտնում եմ ժողովրդին, որը ընդվզում է իր նկատմամբ կատարուող ապօրինութիւններին, ընտրակեղծիքների դէմ»:

«Սա գոյտ մարդկային աջակցութիւնն է», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց թուամանեանի անուան տիկնիկային թատրոնի ղեկավար Ռուբէն Բաբեանը՝ յաւելելով. - «Հիմա եկել է մի պահ, երբ իսկապէս հասարակութիւնը պահանջում է փոփոխութիւններ: Աւելի լաւ պահ մեր հանրապետութեան նախագահի համար դժուար է պատկերացնել՝ եթէ նա իրականում ուզում է կատարել այդ փոփոխութիւնները»:

Ռուբէն Բաբեանը շարունակելու է այցելել հրապարակ ու շարունակելու է պնդել իր յորդորը, թէպէտ չի կարծում, որ այն կարող է մեծ ազդեցութիւն այս պահին ունենալ:

Կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի ղեկավար Արմէն Մազմանը, ով բազմիցս նշել է, որ աջակցում է գործող նախագահին, չի հերքում, որ մի օր ինքն էլ կարող է որպէս մարդ այցելել

Յովհաննիսեանին եւ իր աջակցութիւնը յայտնել, սակայն դա չի նշանակի, որ նա «իր կողմից կը լինի»:

Մագմանեանի համոզմամբ՝ արուեստագէտի խօսքն այսօր այն ուժգնութիւնը չունի, ինչ ունէր ժամանակին, քանզի «բացակայում է ներքին պատասխանատուութեան զգացումը». - «Այ դա չեն գիտակցում մեր արուեստագէտները: Ես կարծում եմ՝ շատ պատեհապաշտ են շատերը, շատ շահամոլ են շատ-շատերը»:

Հարցին, թէ արդեօք իշխանական ուժերին սատարելն աւելի շահաւէտ է, Մագմանեանն արձագանքեց. - «Ով է ասել, որ ընդդիմադիր դաշտը քիչ փող ունի: Նոյն «Բարգաւաճ Հայաստան»-ը հիմա կիսաընդդիմադիր կեցուածք ունի: Եթէ նկատի ունենանք, որ հիմա գոյնաւոր լեզուափոխութեան գրասենեակներ են երեւանում բացուել, ընդդիմադիրն է, պարզուեց, ձեռնառու»:

Գագիկ Գինոսեանը, մինչդեռ, պնդում է, որ ինքը եղել է միշտ ընդդիմադիր ու անգամ իր ընկերոջ՝ Բաֆֆի Յովհաննիսեանի իշխանութեան գալու դէպքում իշխանամէտ չի լինելու. - «Ես որեւէ պաշտօնի չեմ ձգտում»:

Դիտարկմանը, թէ շատ արուեստագէտներ գործող իշխանութիւններին պաշտպանում են պաշտօնը չկորցնելու վախից՝ Արմէն Մագմանեանն արձագանքեց. - «Շատ փոքր արգումնեմ է, որը հիմք լինի, որ ես պաշտպանեմ Սերժ Սարգսեանին: Աւելի կարեւոր, ինձ համար թանկ բաներ կան՝ 90-91 թուականից ի վեր այդ մարդու կեանքում ինձ կապող, որի համար ես իմ ձայնը տալիս եմ»:

ՊԵՅՐՈՒԹԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ԹԱՂԱՍԱՍԸ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Լիբանանի մայրաքաղաքի՝ Պէյրուսի Նոր Հաճըն թաղամասը իր պաշտօնական ճշգրիտ անուանումին վերատիրացաւ անցեալ տարի, իսկ այսօր ան յայտնուած է քաղաքապետութեան բարեկարգման ծրագրի ներքին ցանկին վրայ, շնորհիւ քաղաքապետութեան հաճընցի անդամ Արամ Մալեանի ջանքերուն:

Նոր Հաճնոյ ենթակառուցները բարեկարգելու, թաղամասին մէջ ապրուստային պայմանները բարելաւելու եւ թաղեցիներու առօրեայ դժուարութիւնները լաւ թահարելու նպատակով, Պէյրուսի քաղաքապետութեան անդամներ Արամ Մալեան եւ Մոհամմէտ Տուրան Երկուշաբթի, Մարտ 11-ին հանդիպում ունեցան թաղեցիներուն հետ, ներկայութեամբ UNICEF-ի ներկայացուցիչներուն, Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հովիւ՝ Տէր Նարեկ Քհն. Հեճինեանի, եկեղեցւոյ թաղականութեան եւ տիկնանց վարչութեան անդամներուն, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներուն, շրջանին մէջ գործող միութեանց ատենապետներուն:

Մօտ մէկ ու կէս ժամ տեւած այս հանդիպման ընթացքին քննարկումը կեդրոնացաւ Նոր Հաճնոյ ապահովական եւ առողջապահական խնդիրներուն եւ ապրուստային կարիքներուն վրայ:

Հետեւելէ ետք թաղի բնակիչներու եւ պատասխանատուներու կարծիքներուն եւ տեսակէտե-

րուն, ժողովականները եկան ա՛յն եզրակացութեան, որ ապահովական բնագաւառին մէջ, շնորհիւ կուսակցութեան անդամներու եւ բնակիչներու աջակցութեան, թաղին մէջ ապահովական կացութիւնը ունի կայուն վիճակ: Նոր Հաճըն թաղամասը կը համարուի Պէյրուսի ամենէն ապահով շրջաններէն մէկը:

Ենթակառուցներու առումով շեշտուեցաւ, որ Նոր Հաճընը կարիք ունի կենսական որոշ նորոգութիւններու եւ բարեկարգումներու: Պէյրուսի քաղաքապետութեան գոյգ ներկայացուցիչները խոստացան քաղաքապետական խորհուրդի յաջորդ առաջին նիստին ընթացքին արծարծել այս նիւթը եւ ապահովել թաղամասի բոլոր փողոցներու բարեկարգման ամբողջական ծրագիր, նախ պահպանել արդէն իսկ գոհացուցիչ համարուող անվտանգութիւնը, ապա ձեռնարկել Հաճնոյ տարբեր շրջաններուն մէջ կոյուղիներու մաքրութեան, վնասաբեր միջատներու ոչնչացման, ընդհանուր առողջապահութեան պահպանման եւ անհաճոյ երեւոյթներու վերացման աշխատանքներու:

Նոր Հաճնոյ թաղեցիները արդիւնաւէտ որակեցին հանդիպումը եւ շնորհակալութիւն յայտնեցին Պէյրուսի քաղաքապետութեան անդամներուն, իրենց հոգատար վերաբերմունքին եւ թաղամասի զարգացման ուղղութեամբ իրենց տարած աշխատանքին համար:



ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԼԻԲԱՆԱՆ ՍԱՍ ԷԼ ՀԱՐԻՐԻ ՉԻ ԿՐՆԱՐ ԼԻԲԱՆԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

Փարիզէն ստացուած տեղեկութեանց համաձայն Լիբանանի նախկին վարչապետ Սատ էլ Հարիրի, իրեն ներկայացող Լիբանանեան պատուիրակութեան մը առջեւ ելոյթ ունենալով յայտարարած է, թէ առայժմ չի մտադրեր Պէյրուս վերադառնալ: Ան նշած է, որ իր այս որոշումը առնուած է երկրէն ներս տիրող անապահով վիճակին, ինչպէս նաեւ իր կեանքին դէմ սպառնացող լուրջ վտանգներուն պատճառով:

ԲՈՒՌՆ ՑՈՅՑԵՐ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Լիբանանի մայրաքաղաքին մէջ Երկուշաբթի օր սկսան բուռն ցոյցեր, կազմակերպութեամբ աշխատաւորական սէնտիքաները համակարգող Խորհուրդին կողմէ: Անոնց կողմէ ներկայացուած կարգ մը կենսական պահանջներն անտեսուած են կառավարութեան կողմէ: Յուցարարներն արդէն փակած են օդակայան տանող գլխաւոր մայրուղիներէն մին:

Միւս կողմէ Լիբանանի յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններուն համար ցարդ ոչ մէկ թեկնածու արձանագրուած է: Իսկ լիբանանեան ոյժեր խորհրդարանական պլոքի նախագահ Երեսփոխան Ֆուատ էլ Սիհիորա յայտարարած է, թէ՛ ընտրութիւնները պէտք է տեղի ունենան որոշուած ժամանակին: Գալով ընտրական նոր օրինակի՝ Ուղղափառ Համայնքի նախագծին՝ այս մէկը անընդունելի կը նկատուի:

ՍՈՒՐԻՈՅ ԸՆԴԴԻՍԱԴԻՐՆԵՐՈՒ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Սուրիոյ հակա-կառավարական ընդդիմադիր ոյժերու բազմանդամ պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ Հայաստ Մաննահի այս օրերուն Ռուսաստան կը գտնուի: Պատուիրակութիւնը հանդիպում մը ունեցած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Լավրովի հետ:

Երկրի վարչակարգային ոյժեր Դամասկոսէն դէպի հիւսիսային շրջաններ արձակած են «Սքոթ» տիպի հրթիռներ:

Պէյրուսի ստացուած լուրերու համաձայն ըմբոստները Դամասկոսի մօտերը վար առած են պատերազմական օդանաւ մը: Անոնք յարձակումներ գործած են նաեւ Հալէպի եւ Տէր Զօրի շրջանները, պատճառ հանդիսանալով 80 անձերու մահուան:

Day Trip To Santa Barbara & Solvang

On Saturday
March 16, 2013

We will be headed to Catchuma Lake to have a barbeque lunch, then visit Solvang & Downtown Santa Barbara

Departure Times & Locations
7:30 a.m. – 1060 N. Allen Ave., Pasadena
8:00 a.m. – 300 N. Glendale Ave., Glendale

PLUS TWO SURPRISE VISITS! **\$50.00 Per Person**

For information, please contact Lena at 626-485-6434 or Karine at 818-324-0574

ԵՐՈՊԱ ՎԱՆԿԱՐԿԵԼՈՎ՝ ԴԵՊԻ ԹՈՒՐԲ-ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏ

ՍԱՄՈՒՔԼ ԿՈՍԵԱՆ

Փետրուարի 27-ին պաշտօնական այցով Ատրպեյջանում գտնուող Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշուիլիի այն տեղ հնչեցրած մտքերն ասես Հայաստանին հասցեագրուած մեսիջներ էին՝ հարեւանների հետ արտաքին քաղաքականութեան մէջ նոր խմբագրումների հրամայականով: Նրա խոստովանութիւնը. «Ինձ համար իւրաքանչիւր այցը Պաքու տօն է», արդէն իսկ խօսուէն է, հետն էլ յաւելումը, որ «մեծ ռեսուրսներ ունեցող որեւէ երկիր չի կարող համեմատուել Ատրպեյջանի հետ»: Իրօք, հետաքրքիր գնահատականներ, մանաւանդ Ատրպեյջանն այդպիսին է. «Որովհետեւ Ատրպեյջանը յստակ ուղեգիծ ունի, անկախութեան յստակ ուղի, յստակ հորիզոններ»: Ահա այսպիսի բաներ, իսկը դասագրքային երկիր: Բայց սա դեռ սկիզբն է: Սաակաշուիլին ընդգծել է, որ Ատրպեյջանն ու Վրաստանը ընդհանուր պատմութիւն ու արժէքներ ունեն: Հետաքրքիր է, Սաակաշուիլին պատմութիւն ասելով ի՞նչ է հասկանում, երբ ազերիների երկիր չի եղել, եւ յատկապէս ի՞նչ ընդհանուր արժէքների մասին է խօսքը, թէեւ ոմանց համար տասնամեակներն էլ կարող են երկրի պատմութիւն որակուել:

Բայց կարծես այդ ամէնն այնքան էլ էական չէ, կարեւորը, որ «ատրպեյջանա-վրացական բարեկամութիւնն աշխարհում բարի դրացիական յարաբերութիւնների վառ օրինակ է»:

Մնում է հաւատալ, որ այս կարծիքը կիսում են նաեւ Վրաստանի ու Ատրպեյջանի ժողովուրդները, մանաւանդ Ատրպեյջանի ժողովուրդը, որին դժուար է հաւատացնելը, թէ քրիստոնեայ վրաստանը կարող է բարեկամ լինել: Սաակաշուիլին անդրադարձել է նաեւ Պաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շինարարութեանը: Ինչպէս յայտնի է, Վրաստանի նոր վարչապետ Իվանիշվիլին ասել էր, որ այդ երկաթգիծը այնքան էլ ձեռնտու չէ Վրաստանի համար, քանի որ երկաթուղու շահագործումը կարող է նուազեցնել վրացական այլ երկաթգծերի ապրանքաշրջանառութիւնը եւ նպաստել վրաստանի նաւահանգիստներից ու երկաթուղիներից աշխատողների արտահոսքին: Այս յայտարարութիւնը Սաակաշուիլին որակել է որպէս դաւաճանութիւն ու յանցագործութիւն, նշելով, որ նախագծի ձախողումով վրաստանը ոչ միայն հեռանալու է Եւրոպայից, այլեւ «ստրկատիրական կապերով փաթաթուելու է Ռուսաստանին»: Ի հարկէ, Սաակաշուիլին յայտնի է Կարս-Գիւմրի թբիլիսի

տնտեսապէս առաւել շահաւէտ տարբերակը, սակայն նրա՝ ռուսների ու Ռուսաստանի նկատմամբ ատելութիւնն, իրօք, խանգարում է նրան սեւը՝ սեւ ու սպիտակը սպիտակ տեսնել, ինչը տարածուած է նաեւ Ռուսաստանին առնչուող ամէն ինչի վրայ: Եւ որքան էլ փորձում է իր վերաբերմունքը որպէս երկրի անկախութեան ու ազատութեան համար պայքարի արդիւնք որակել, եթէ նոյնիսկ այդպէս էլ է, ապա անզէն աչքով էլ տեսանելի է, որ Եւրոպա վանկարկելով, Սաակաշուիլին, գուցէ եւ ակամայ, երկիրը ազդեցութեան այլ՝ թուրք-ատրպեյջանական ոլորտ է տեղափոխում: Նրա դեկավարութեան տարիներին ոչ միայն տնտեսութիւնն է կախուածութեան մէջ ընկնել այդ երկրներից, այլեւ ժողովրդագրական փոփոխութիւնների հետեւանքներն են տեսանելի: Ստացում է՝ տարածաշրջանում «ժողովրդավարութեան օրինակ» Վրաստանը, ինչպէս Պարոնեանը կ'ասէր՝ առաջ պոռալով ետ-ետ կերթայ՝ դէպի բռնապետութեան ու իսլամիզմի գիրկը: Բայց կարծես Սաակաշուիլիի համար միեւնոյն է, միայն թէ Ռուսաստանից հեռու լինի: Քաղաքական այս անհեռատեսութեանը դժուար է որեւէ տրամաբանական հիմնաւորում գտնել: Եթէ Ռուսաստանի հետ Վրաստանն իսկապէս վարչական եւ մշակութային դարաւոր յարաբերութիւններն մէջ է եղել, ապա անհասկանալի է Սաակաշուիլիի թուրք-ազերիական կողմնորոշումը, որքան էլ պատմական ու հոգեւոր ընդհանրութիւններ փնտռի մի տեղ, որտեղ այդ ընդհանրութիւնները չկան ու չեն եղել... Առաջին հայեացքից ներկայացուածը կարող է գուտ վրացական ինդիքը թուալ: Իրականում քաղաքական այսօրինակ սցենարը լուրջ վտանգ է Հայաստանի եւ ողջ տարածաշրջանի անվտանգութեանը: Նման յարաբերութիւնների զարգացման հեռանկարում Վրաստանը հագիւլ թէ կարողանայ թուրք-ազերիական թելադրանքներին դիմակայել եւ ստիպուած է լինելու մասնակցել հակահայ բոլոր միջոցառումներին ինչպէս տարածաշրջանում, այնպէս էլ միջազգային այլ միջօրեականներում, ընդհուպ մինչեւ Հայաստանը շրջափակող երրորդ երկիր դառնալը: Պաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարութեանն աջակցելն ու Ջաւախքում իրականացուող քաղաքականութիւնը դրա առաջին նշաններն են: Նոր վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի պահուածքը յուսադրող է, սակայն դեռ յայտնի չէ՝ վրացիների հոգեբանութեան մէջ ինչ աստիճանի են տարածուած Սաակաշուիլիի քաղաքականութեան մեծատապալները:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿԱՅԻՆ

ՍԱՐԳԻՍ ՓՈՇՏՈՂԵԱՆ

Այնպէս կը թուի ինձի, թէ Սիւրբաբայի «Ով մարդկային արդարութիւն»ը լսած ըլլամ Ապրիլ 24-ի հաւաքի մը ընթացքին, ի հարկէ դպրոցական-պատանեկան շրջանիս, «մարդկային» բառը ներսիդիս թրքականով մեկնա բանուած էր: Աւելի ուշ անշուշտ, երբ զանազան դէպքերու ակնատես եղայ, կամ վերջիչեցի, եւ մանաւանդ ինչպէս կ'ըսեն «կրակը ինչպէս տեղը կ'այլը» անարդարութիւններու ենթարկուեցայ, բառացիօրէն առի բառը, գործնապաշտօրէն ու թիւրիմացութիւնը փարատեցաւ ու «մարդկային»ը առաւ բնական իմաստը: Մարդկային. մարդը ճանչնալու միջոցը անշուշտ մարդը քննելն է, անոր շարժառիթը, նպատակը, եւ այլն: Լաւագոյնն է սակայն դիտել անասունները, մանաւանդ վերջին թեք-նոլոճիայի դիւրութիւնները մեծ շնորհք են, որոնցմէ առաւելագոյնս կարելի է օգտուիլ, եզրակացութիւններու յանգիլ, բաղդատելով մարդու հետ: Գիրքերն ալ անշուշտ իրենց յատկանշական դերը կրնան ունենալ, եթէ նոյն նիւթերը նկատի ունին: Փիլիսոփայութիւնն ալ իր դերը ունի, ինչպէս օրինակ Քանկ Ֆու Յէ կ'ըսէ. «Մարդու եւ անասունի միջեւ շատ քիչ տարբերութիւն կայ եւ շատ քիչ մարդիկ ունին այդ քիչ տարբերութիւնը»: Իսկ իր ժամանակակից Լաօ Յէ Եւսոնի հետեւեալ խօսքը. «Պատերազմի օրերուն ստորին եսը կ'ըլլայ առաւելագոյն»: «Ստորին ես» ըսելով կը հասկնուի անասնական բնագործ: Իսկ ինչ ըսել, երբ կեանքը դարձած է լիովին ռազմադաշտ - պաղ պատերազմ, տաք պատերազմ, տնտեսական, քաղաքական, քաղաքացիական ու հո՛ւ ուրեմն՝ ստորին ենն է միշտ առաջնահերթ:

Դիտեցէք կրիան. վտանգի մը պարագային գլուխն ու ոտքերը իր պատեանին մէջ կ'ամփոփէ ու ինքնապաշտպանութեան կը դիմէ: Իսկ վիզի տակի ոսկորը արդէն իսկ եռանկիւն սուրի ձեւ ունի, մարտի ընթացքին գործածելու: Բնութիւնը տուած է իրեն հարկ եղածը: Իսկ մենք ի՞նչ ունինք բնութեանն անդին. բանականութիւնը, որ դարձեալ ենթակայ է բնագործի սովորաբար, բայց Ո՞՞ ԱՅՆ ՔԻՉԵ-

Բուն, զորս Քանկ Ֆու Յէ կը լիչէ, որոնք եւ բնածին յատկութիւն ունին եւ մարդուած են առ այդ: ՇԱՕ ԼԻՆ տաճարը վկայ:

Եւ մենք այդ քիչերու պատճառաւ է, որ տակաւին կանք ու կը գոյատեւենք: Կը գոյատեւենք, սակայն...

Մենք աւելի՛ ապրելով քեզ սիրեցինք Քան՝ մեռնելով.

Անոր համար դուն մեռար ա՛լ աւելի ու մնացիր ափ մը հող... (1975)

70 տարի, կողմի մը կողմէ միայն «բռնատիրութիւն», «Սիւրբաբայի», եւ այլն լսելէ ետք, վերջապէս Հայաստան դարձաւ ազատ, անկախ...:

Ու հիմա՛ երկու տասնամեակներէ աւելի կը լսենք դժբախտ իրականութիւնը. աղքատութիւն, արտագաղթ, սաղրանքներ, եղբայրասպանութիւն, ամէնէն յատկանշականը անշուշտ, 1999-ի Հոկտեմբեր 27-ի Ազգային Տան սպանդն էր: Ու դեռ ինչեր. ընտրութիւններու խարդախութիւն, եւ այլն, եւ այլն...: «Միթէ սա՞ է երկիրը Նայիրի»...: Միթէ սա՞ է անկախութիւնը...: Ցաւատանջ գրութիւններ կը վխտան մեր թերթերուն մէջ, որոնցմէ «սակայն իր մայր հողին վրայ արդարութեան շուքը չգտաւ ու հեռացաւ»: Արդեօ՞ք հեռացած վայրին մէջ արդարութիւն գոյ էր. այդ ալ ուրիշ հարց, սակայն ի հարկէ ապրելակերպի տարբերութիւնները երկրէ երկիր երբեմն անհամեմատելի չափերու հասած են: Իսկ՝ Հայաստան երկիր դրախտավայր»ը երգ է միայն:

Երէկի «քիչ»երէն պիտի լիչեմ Յովսէփ Էմինը, որ Հնդկաստանի բարեկեցիկ կեանքը լքելով գնաց Լոնտոն եւ հոն՝ սափրիչի մը միջնորդութեամբ բխանութպանի մը քով բեռնակիր դարձաւ...

Հայաստանի փրկութեան աշխատանքի իր ճիգին մէջ:

Աւա՛ դ անցեալի կորովն ու կամքը ձուլուեր են նոր օրերու մտայնութեան դէմ: Նոր օրեր, նոր դարեր: Այսօր՝ «ուր հաց, հոն կաց» անհայտընիք: Դրամատիրական հասարակարգի արտադրութիւն:

Ձի, դրամատիրութիւնը ստորին է, քաղաքակրթութեամբ՝ բանականութեամբ: Իսկ ընկերվարութիւնը՝ եսը սանձող բանականութիւնը:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 100,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.
 Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:----- Fax:-----

OFFICE SPACE FOR RENT
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave
 Pasadena, CA 91104
 Գրասենեակները վերանորոգուած
 եւ յարմար վարձքերով Յետաքրքրուողներէն
 հեռաձայնել՝ (626) 398-0506

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ՝ ՄԱՐՏ 8-Ը

ՀԱՅԿՈՒՀԻ ՓԱԹԱՓՈՒԹԵԱՆ

Մինչև 20-րդ դար, կինները ընդհանրապես սահմանուած էին միայն գաւակ ունենալու եւ ընտանիքին հոգսերը տնտեսելու: Տեսակ մը գերիններ էին անոնք, որ կ'աշխատեցին նաեւ հողագործական ամէն տեսակի աշխատանքներու եւ գործարաններու մէջ: Անշուշտ բացառութիւններ ալ կային, ուր կինները յարգուած էին կարգ մը զարգացած երկիրներու, որոշ դասակարգերու մօտ:

1977-ին, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կողմէ պաշտօնականացած, «Կանանց Միջազգային Օր»-ը իր ծագումը կ'առնէր գործաւորուհիներու տառապանքներուն դէմ բողոքի պայքարով, 20-րդ դարու սկիզբին, գործի աւելի լաւ պայմաններու եւ ընտրութիւններու մասնակցելու իրաւունքներուն, ինչպէս նաեւ կիններուն դէմ բազմապիսի խժժութիւններն ու բռնաբարումները կասեցնելու պահանջով: Յետոյ ցոյցեր կազմակերպուեցան, մասնակցելու քաղաքական եւ Տնտեսական մարզերէն ներս:

Այսօր, ամէն տարի, կը նշուի Մարտ 8-ը գրեթէ համաշխարհային մասնակցութեամբ, առիթ ստեղծելով կիններու նոր իրավիճակը քննելու: Այդ դատին համար պայքարող կազմակերպութիւնները ցոյցերով եւ հաւաքներով կը տօնեն շահուած յաղթանակները եւ կ'առաջարկեն նոր պահանջներ, բարելաւելու համար կիններու կեանքը:

Այս դատը թէեւ սկսած է քաղաքական եւ ընկերային լուրջ պատճառներով, բայց շատ մը երկիրներու մէջ, ան հիմա վերածուած է կնոջ հանդէպ յարգանքի եւ սիրոյ, տեսակ մը Մայրերու Օրուայ եւ Ս. Վալընթինի խառնուրդի մը՝ առիթ ստեղծելով այլ մարդոց, արտայայտելու իրենց երախտագիտութիւնը կանանց հանդէպ, նուիրելով ծաղկեփունջեր: Կարգ մը տեղեր, օրինակ Իտալիոյ մէջ՝ միմոզայի ծաղկեփունջեր կը նուիրուին, միմոզային վառ դեղին գոյնն ու նուրբ բոյրը նկատելով որպէս խորհրդանիշ կենսունակութեան, ուրախութեան, իմաստութեան եւ ջերմութեան:

Եւ սակայն, այս անցումը արագ եւ հեզասահ չէ եղած բնաւ, ինչպէս ամէն նոր լուրջ շարժում, հարկ եղած է նախաձեռնել երկարամեայ պայքար, քիչ մը ամէն տեղ:

Այսպէս, 1910-ին, տարբեր երկիրներու ընկերվարական կազմակերպութիւններու անդամ կի-



ներու միջազգային խորհրդաժողովին որոշուեցաւ Կանանց Միջազգային Օր մը նշել:

1911-ին, մէկ միլիոն կիններ ցոյցի ելան ամբողջ Եւրոպայի մէջ: Իսկ 1913-ին, Մարտ 8-ի օրը, ռուս կիններ գաղտնի հաւաքներ կազմակերպեցին: Յաջորդաբար, եւրոպական այլ երկիրներու, Ամերիկայի եւ Չիլիոյ կիններն ալ միացան շարժումին մօտաւորապէս 500 ի հասցնելով ցոյցերուն թիւը: Որպէս արդիւնք՝ եւրոպական երկիրներն ու Ամերիկան հետզհետէ, սկսան զիջիլ եւ ընդունիլ կանանց հիմնական իրաւունքներն ու պահանջները:

Աշխատելու իրաւունք, այո՛, բայց ինչ գնով: Ես որպէս ամբողջ կեանքս աշխատած եւ երեք գաւակ մեծցուցած կին, կընամ վկայել թէ ինչպիսի գոհողութիւն եւ զրկանք կ'ենթադրէ այս գոյգ յանձնառութիւնը: Բարեբախտաբար այժմ պայմանները փոխուած են եւ շատ մը դիւրութիւններ կան, ինչպէս մանկամտութիւններու եւ մանկապարտէզներու ստեղծումը: Կը խորհիմ թէ, գոնէ զարգացած երկիրներ պէտք է նկատի առնեն այս պարագան եւ մայրերու երեք տարուայ արձակուրդ տան, ինչպէս արդէն կ'ընեն սքանախառն երկիրները. հաւանաբար մանուկները շատ պիտի օգտուին անկէ եւ մայրերն ալ հաճոյքը պիտի ունենան իրենց գաւակներուն հետ ըլլալու, այդ շատ կարեւոր կազմաւորումի առաջին երեք տարիներուն:

Հակառակ ձեռք ձգուած դրական շատ մը արդիւնքներուն, դժբախտաբար, տակաւին նոյն իսկ Ամերիկայի եւ ուրիշ զարգացած երկիրներու մէջ կայ որոշ վայրագութիւն կիններու հանդէպ, այնքան շատ՝ որ բազմաթիւ պատ-

Շաբ.ը էջ 19

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

ՈՄԿԱՆ ՄԻՈՒԹԱՐԵԱՆ

Խոստովանութիւնն պէտք է բնութագրել, թէ ինքնագիտակցութեան կամ ինքնաճանաչման գերագոյն արտայայտութեան երեւոյթ: Խօսքս կը վերաբերի մի քանի օր առաջ Հեռուստատեսիլի երկրորդ կայանի (CBS Channel 2) վրայ կատարուած յայտարարութեան, Կաթողիկէ Եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականի մը կողմէ, յանձին Նիւ Եորքի Արքեպիսկոպոս՝ Կարտինալ Տիմոթէոս Տոլանի (Archbishop Timothy M. Dolan), որ քաջութիւնը ունեցաւ հրապարակաւ յայտարարելու. «Մենք եկեղեցականներս ենք յանցաւոր, որ ժողովուրդը եկեղեցի չի յաճախեր»: Կարելի է երեւակայել ասկէ աւելի բացայայտ, անկեղծ խոստովանանք:

Կարտինալ Տոլան, որ նախագահն է Ամերիկայի Կաթողիկէ Եպիսկոպոսաց Ժողովին, կը նկատուի նաեւ հաւանական թեկնածուներէն մէկը Պապական Աթոռին: Նոյն այս ժպտերես, հրաշածօն, հրաշալնորհ եւ դիւրահաղորդ անձնաւորութիւնն էր որ փորձեց խափանել Նահանգապետ Անտրիու Քուոմոյի (Gov. Andrew Cuomo) կողմէ առաջարկուած՝ միասնականներու ամուսնութեան պաշտօնականացումը Նիւ Եորք Նահանգի մէջ:

Քաջարի եւ օրինակելի այս Կարտինալը 2002 թուականէն մինչև 2009 նշանակուած էր Միլուոքիի Արքեպիսկոպոս՝ հանգուցեալ Յովհաննէս Պօղոս Բ. պապին կողմէ, ու ապա Նիւ Եորքի Արքեպիսկոպոս՝ Պենետիկոս Ժ. պապին կողմէ: Պատմագիտական եւ աստուածաբանական ակադեմիական գոյգ տիտղոսներով զարդարուած այս եկեղեցականը, որ նաեւ հեղինակ է բազմաթիւ հատորներու, ունի համեստութիւնն ու քաջութիւնը յայտարարելու, թէ՛ եկեղեցականներն են, որ թերացած են իրենց հոգեւոր առաքելութեան մէջ, եւ հետեւաբար թափուր կը մնան եկեղեցւոյ նստարանները: Իր հովուական շրջաբերականներէն մէկուն մէջ ան կը շեշտէ անհրաժեշտութիւնը «հոգեւորականներու հոգիի վերանորոգման» (renewing the priestly heart), որովհետեւ այդ վերանորոգումին մէջ կը տեսնէ վերակենդանացումը հոգեւորականաց իսկական կոչումին եւ նուիրումին:

Ինչն է որ կը պակսի հայ եկեղեցականին, որ չի կրնար տեսնել անհրաժեշտութիւնը վերանոր-

րոգելու իր կոչումն ու կենցաղը, որպէսզի կարենայ Եկեղեցին վերակենդանացնել իր հաւատացեալներով: Երբ «Եկեղեցի» կ'ըսենք, կը հասկնանք հաստատութիւն մը որ ամբողջական է միայն ա'յն ատեն, երբ շէնք, ժողովուրդ, պաշտամունք եւ Եկեղեցւոյ պաշտօնէութիւն՝ միասնաբար մէկ ամբողջութիւն կը կազմեն:

Ժողովուրդ մը կը մօտենայ Քրիստոսի եւ Եկեղեցւոյ, երբ կը տեսնէ իր եկեղեցականը՝ լի կոչումով եւ իմացականութեամբ, որ իր կեանքի օրինակով կառնիքն է իր հաւատացեալները միանալու եւ վկայելու Աւետարանի ճշմարտութիւնները:

Անգամ մը եւս Կարտինալ Տոլան կոչ կ'ուղղէ իր եկեղեցականներուն, որ վերանորոգեն իրենց հոգիները եւ ըլլան նախանձախնդիր իրարու հանդէպ, որպէսզի կարենան իրարմով զօրանալ իրենց հաւատքին մէջ, զգան Քրիստոսի ներկայութիւնը եւ Ս. Հոգիով միութարեն իրենց հաւատացեալները:

Հայց. Եկեղեցւոյ արդի վիճակը, մասնաւորաբար ժողովուրդը կրօնական գեանի վրայ դաստիարակելու առումով, ողբալի վիճակ մը կը ներկայացնէ: Եկեղեցւոյ բեմը-խորանը որ խօսուն վկայարանը պէտք է ըլլայ մեր Մայրենի Եկեղեցւոյ, դժբախտաբար կորսնցուցած է իր հրապոյրն ու արժէքը: Աւետարանի ոգիով, խորունկ վերլուծութեամբ, ծրագրեալ եւ պատրաստուած քարոզախօսութիւններ՝ բացառութիւն են մեր եկեղեցւոյ մէջ: Մեր դպրեվանքները հարկ եղած կարեւորութիւնը չեն ընծայած՝ ծառայութեան եւ պատասխանատուութեան ամբողջական նուիրումով, այլ խօսքով՝ ճշմարիտ կրօնի գիտութեամբ զինուած հոգեւոր մշակներ պատրաստելու գործին:

Աւելորդ կը նկատենք անգամ մը եւս շեշտելու ուսման կարեւորութիւնը Եկեղեցւոյ պաշտօնեացին համար: Մեր նախորդ յօդուածներուն մէջ շեշտած ենք, թէ Եկեղեցւոյ ծառայութեան պատրաստող պաշտօնեացին համար անհրաժեշտ է ունենալ Կոչում եւ Նուիրում, եւ սակայն ի՞նչ չունենայ անոնց կողքին պահանջուած մտաւոր պատրաստութիւնն ու գիտութիւնը, այդ անձը չի կրնար կառուցողական ծառայութիւն ունենալ Եկեղեցւոյ եւ ժողովուրդի կեանքին մէջ:

Ահաւասիկ Կարտինալ Տոլանի

Շաբ.ը էջ 19

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


Նախապէս Բերդ Քաղաքին մէջ Սուրբ Գէորգ անունով եկեղեցի եղած է, որ կառուցուած է 1680 թուականին եւ ցաւալիօրէն 1930ական թուականներուն ի թիւս ա՛յլ եկեղեցիներու, հիմնադատակ կործանուած է: Այս առումով ո՛չ թէ միայն նոր եկեղեցի մըն է որ կը կառուցուի, այլ պատմութեան եւ յատկապէս հոգեւոր կեանքի շարու-նակութիւնն է, որ վերատին կ'ապա-հովուի եւ կը վերականգնուի:

Հանգուցեալը իր կատարած նուիրատուութիւններուն շնորհիւ վեհափառ Հայրապետի կողմէ ար-ժանացաւ Սուրբ Գրիգոր Լուսաւո-րիչ Ա. Կարգի Շքանշանին, որուն պարգևատրումը կատարեց Առաջ-նորդ Սրբազան հայրը Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ մէջ: Արդարեւ, ան չափազանց խոր սէր եւ յարգանք ունէր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ վեհափառ Հայրապետի հանդէպ:

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ



ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ

Մեր զեղանկարչութեան մե-ծերէն Յակոբ Յակոբեանի գոյժը մեզ անակնկալի առջեւ դրաւ, երբ վերջերս մեծ հետաքրքրութեամբ ընթերցելով իր առույգ ոճով գրուած յօդուածները, մեր մտապատկերա-ցումին մէջ, նոյնացուցեր էինք զանոնք իր առողջական կայտա-ուութեան եւ «երիտասարդական» կորովին հետ: Անշուշտ, աւաղելով, դեռ երկար պիտի ինտունք սրտցաւ հայ մարդու եւ քաջ մտաւորականի վայել իր գրութիւնները՝ մեզ զգաս-տութեան մղող:

Բարեբախտաբար, ան մեկնե-լէ առաջ, իր ժողովուրդին եւ մարդկութեան ընծայեց անգնահա-տելի գանձ մը՝ իր սքանչելի ու պիտիարար զեղանկարչութիւնը՝ ներհուն քնարականութեամբ թա-թաւուն, մեղմ ու նուրբ գոյներու կախարդանքով վրձինուած եւ մարդկային խոր թափանցումով ընկալուած: Համատարած լու-թեան, խոկումի, զգաստութեան եւ սպասումի վեհաշունչ ոգիները կը թեւածեն իր պաստառներուն ընդ-մէջէն: Սահմուկած տիեզերքն է

կարծէք քարացած, շունչը բռնած, մեր ժողովուրդը պատուհասած՝ Մեծ Չարիքին դիմաց: Իւրաքան-չիւր պատառ, լուութեան անգապե-լի աղաղակ մըն է որ կը պոռթկայ մարդկութեան քուն մտած խղճմտանքին դէմ: Այս ամէնքը՝ արուեստի ամենադժուար ուղիներ-րուն որդեգրումով եւ կիրարկու-մով. պարզութեամբ, մեղմութեամբ, նրբութեամբ, ներթափանցութեամբ եւ ներքին երաժշտականութեամբ: Առաւելաբար երկու գոյներու, թե-թեւ դեղինի եւ նօսր սպիտակի հիանալի ներդաշնակութեամբ ստեղծելով մթնոլորտ, պահ ու հոգեվիճակ:

Իր ամէն մէկ իւղանկարին առջեւ, յուզումով, երկիւղածու-թեամբ եւ զգաստութեամբ կ'ամ-փոփոկինք անպայման, առանց ընկճ-ուելու սակայն, զի անկից ծորող զեղեցկութեան լոյսն ու ներքին մեղեդին կը հարստացնեն մեր հոգին, կը զօրացնեն մեր կամքը:

Ի խորոց սրտի կը սգանք իր մեկնումը, կը խոնարհինք իր ան-մար յիշատակին առջեւ եւ կը մրմնջենք ցաւագին՝ Հօ՞ երթաս, վարպե՛տ:



ՄԱՍՏՈՅ ԳՈՒԷՏ

Տիկեանց Օժանդակ Մարմին
Չաւեշտի Բացառիկ Երեկոյ
Կատարողութեամբ՝
Տաղանդաշատ Երգիծարակ



ՍՏԵՐԱՆ
ՅՈՒՂԱԿԻՄԵԱՆՔ

Ուրբաթ, Մարտ 22, 2013
Երեկոյեան ժամը 7:00-ին
Raffi's Banquet Hall
3887 E. Sierra Madre Blvd., Pasadena CA
Մուտքի Նուէր՝ \$30

Համադրման հաշիւր Գեղարուեստական Յայտագիր Անակնկալներ
Տոմսերու համար Հեռաձայնիկ՝
Մաշտոյ Գոլէճ՝ 818-548-9345 Արփի՝ 818-912-0884 Իրմա՝ 626-272-9384

ԿՈՇԱԲԵՐԴ

ԱՐԱՆԱԶԱՐԷՔԻԱՆ

Տէրտէրը փախել էր: Առաւօտ կանուխ տեսան՝ չկայ...

Մեծ արհաւիրքն արեւելքից սելաւալորդ եկել ծովացել էր Կովկաս լեռների ամբարտակին ու պատրաստուած էր ձորաց Դոնով անցնել հարաւ: Վիրքի ու Աղուանքի ուժերը ապահովութեան երաշխիք չէին, երկրի մատոցներն ամրացնելու պէտք կար յամենայն դէպս:

Դրացի իշխանի հետ սահմանային վէճը հին էր, օգնութեան խնդրանքով գնացած պատուիրակներին պատասխանը եղել էր՝ ճանկ ունէիր՝ գլուխդ քորիր:

Մանաց գոմերից վերեւ ժայռակոշտն ամրոցայարմար նպաստաւոր էր՝ եւ ազդանշաններ, լուրեր ու կոչեր յաջորդիւ պնդոցներին փոխանցելու եւ պահեստային կայազոր պահելու, թշնամուն թիկունքից խփելու համար: Շինարարութիւնն աւարտուել էր, վերջին յարդարումներն էին արուած: Տէր հօրը կանխաւ բերել էին՝ աչքի առաջ լինի, օծման օրը չընկնեն գիւղէ գիւղ, տեղում լինի:

Լալուարից ջուրը կաւէ գուռազոցցաշարով գաղտնուղի պիտի գար ինքնահոս, սպասում էին տեղ հասնի, ուր որ է հասնելու էր, երկու օր տէր հօրը պահել էին ու հիմա... չկար:

Իշխանը տանապետ Ուժեղ եւ պատանեակ Ուշիմ եղբայրներին ապսպրել էր գտնեն բերեն:

Ու, ահա, գալիս էին: Գիւղից գետափ գահավէժ ճանապարհն իջել էին:

Նանա իշխանուհու ամեհաթուիչք կամրջի մօտ ջորին վարանոտ քայլ դրեց, բայց միտքն իրենից հետ ընկած, տակաւին կառչած էր կամրջին հասցրած ճանապարհի ծանօթ պնդահողին, յետոյ՝ քին ստացած յանկարծասա աքացին օգնեց յաղթահարել երկընտրանքը, Ուշիմի քրքիջի ուղեկցութեամբ ցատկեց կամրջի վրայ, մի պահ մոռանալով սփրթնած տէր հօր պատկառելի ծանրութիւնը:

- Ուր էիր ճողպրել... այ տղափ, - նոյնպէս ծիծաղեց տասնապետ Ուժեղը:

Վերջից՝ ձիաւոր Ուժեղի ու ջորեգնայ տէր հօր ետեւից տանապետի եղբայր Ուշիմն էր գալիս, հարցրեց:

- Ապեր, տղափը ծակուած տրեխի մէջ դրած լմփոշ կաշուէ կտորը չի, որ անցքը փակի...

Ջուհարաջուրն անցնելուց յետոյ, ծմակ անտառ չմտած, Ուժեղն ասաց:

- Դէ ես էլ էդ եմ ասում...

Կաթոցքի շաւիղով շուտ կը հասնէին, բայց ձիերի ու ջորու համար Առուի ծերպն անցնելը դժուար էր լինելու, մարմնեղ տանելիքն էլ իր հերթին - տէր հօր կրելիք շարձարանքը ուղեկիցների համար ցաւ չէր, սակայն կէս ճանապարհին թողնելը... Յանձնարարուած էր տեղ հասցնել:

Ու նաեւ, չընթացս, ճշտելու հարց կար:

Ձիու գլուխը թեքեց Ջուհար լեռների կողմը, Ջուհարաջրի հունով վեր:

- Այ տղափ, էդ ինչ գնալ էիր գնացել: Ի՞նչ կարեւոր անցք փակելու խնդիր կար, որ ակնակուր գիշերով, գէլ ու գագանի միջով, իշխանական խօսքն անտեսելով քեզ պցել էիր գիւղ...

- Կարգս յարգիր, որդեակ, տարիքս խնայիր:

- Յարգը՝ յարգաւորին, խնայելը... Իշխանը թող խնայի, եթէ խնայի:

- Աւա՛ղ, երկնային Տէր, այլ լեւա չկայ չափ դնել խօսքի ու լուրթեան:- Տէր հօր ծորուն խօսքը կարծես նպատակին չհասաւ, ասաց.- Ինքս գալու էի:

- Ճարդ ինչ: Բայց փութաջանութիւնդ տեսանք հօ, քափ ու քրտինք էիր կտրել...

Հսկայ ընկուզենու տակ եռուզեռ էր:

Մաշկած չորս գառ ետեւի ոտքից կախ էին, հինգերորդը մաշկուած էր:

- Ամրոցը չի փախչի, որդեակ, յապաղենք փոքր-ինչ, խորովեն... Տասնապետը խեթ նայեց:

- Իշխանից առա՞ջ:

- Ինքը հինգ գառ... - նկատեց, երկուսն էլ ընկուզենուց վերեւ դեռ արածուած էին,- ե՞՞թ... եօթ գառ պիտի ուտի՞:

- Արժանաւորների հետ:

- Մի կտոր ուտենք ճանապարհի վրայ, յետոյ կը գանք հիմնաւոր կը սնուենք...

- Եթէ քեզ հետը վերցնի:

Դարձաւ գործաւորներին.

- Պակաս բան հօ չկա՞յ:

- Նուագածունների յետեւից գնացել են:

- Նոր թոնիրը բերել, տեղադրե՞լ էք:

- Տեղադրել ու արդէն տաքացրել եմ,- առաջ եկաւ թոնրագործ բրուտը:- Յետոյ կրակը կը թէժացնեմ: Ներսից ծաղկանման նախշազեր եմ արել, որ ե՛ւ խմորը կպնի պատին, չընկնի, ե՛ւ հացը ծաղկանախշ լինի:

- Խաչանշանը չես մոռացել,- ստուգեց, թէ չկասկածեց տէր հայրը:

- Ներսում բոլորակի խազաշարքեր են՝ խաչ, շուրջը ծաղիկներ:

- Լաւ,- ասաց Ուժեղը,- իսկ...

- Ետ դարձին Հանդազիւղից հարս-աղջիկը կը բերեն: Երէկ հարսանիք կար, ապսպրել եմ պահեն առաջին գիշերուայ իշխանական իրաւունքը:

- Լաւ,- կրկնեց:- Ուշադիր եղէք: Աշտարակի գլխին ազդանշան-ծուխն երեւաց՝ խորովածի կրակը վառէք: Իշխանին վայել չի՞ դայ սպասի:

Անտառից յետոյ շրջանցեցին ամրոցի ժայռավէժ թիկունքը, ու միջօրէին, երբ ստուերներն ուղղահայեաց էին, դուրս եկան արեւելեան լանջերաթիւքի հանդարտ արահետ: Երեւացին պարսպաշարի խրոխտ աշտարակները:

Իշխանն ամրոցից իջել էր պարիսպների վերջին գննման: Նկատեց եկողներին, սպասեց:

Տէր հօր հոգոց-տնքոցները լսելի դարձան:

- Արի՛, արի, կեղծաւոր հոգի,- բայց եւ կարծես դէմ չէր այդ տեսարանը երկարացնել: Արդէն յետիոտն, եկան, հասան, անցան: Ամրոցի մուտքամատոց վերելքում մի աքացի, այնուամենայնիւ, փախաւ:

- Գնա, կոշեւը դեռ կը տեսնես,- ասաց իշխանը:- ...Մինչեւ ջորու մուտքին չխփես, էլ չցեղից լինելը չի խոտովանի:

Տէրտէրն ընկաւ, թէ ձեւարեց, փորի վրայ տարուբերուած էր գետնամած:

- Ո՞ր ծակուռից պեղեցիք սրան:

- Երանեակի բնից...

- Ձեռքն արդէն Երանեակին հասաւ... փաստօրէն իմ հետքերով, կրնկակոխ...

Տես, որ բերանի համը գիտի: Ապա դարձաւ.

- Ել, վեր կաց, յարդարիր վրայ գլուխդ, ժողովրդի մէջ ենք գնում, հօտն իր հովուին է սպասում անհամբեր:

Ջրագործ վարպետը տակաւին ցամաք գուռի մօտ անհանգիստ էր, թոււմ էր՝ ջուրն ուշանում է:

Տաժանապարտ բանուորները, իշխանի դրած օրէնքի ու եկեղեցու սահմանած կարգի դէմ մեղանշանները, որ ամիսներ շարունակ արեւականուխ լծուել էին աշխատանքի ու բանթողից յետոյ ամենօրեայ պարտադիր կոշուէլ-ծեծուէլ-գանակոծուէլ էին, հիմա պահապատեհ դադարի մէջ էին, մինչ ջուրը տեղ կը հասնէր: Իրենցից երեքն անբնական դիրքով ընկած էին նետն արձակած աղեղի լարի պէս պարպուած, արդէն բացակայ հողեղէն այս աշխարհից: Իշխանը մէկի դէմքը յիշեց:

Հանդազիւղից էր, որ Աջիրի նորակառուց կամրջակամարի քարերը խարխլել թուլացրել էր՝ Ողնակի հօտն անցնելիս լցուի ջուրը, չանցնի իրենց կողմն ու իրենց արօտն արածի:

- Ով իր ծառը՝ ինքը բոլորի անտառը...

Մի մատնաչիռ խոտադաշտի համար ողջ գիւղն էր վտանգել:

Միւս երկուսից մէկը Մեծ գիւղի կաշառատուն դատաւորը պիտի լինէր, միւսը՝ Հանդազիւղի գիւղապետը, ով իշխանից ծածուկ հարկ էր խստացրել ու այնքան էր ամբարտաւանացել, իշխանի խօսքը երբեմն գանց էր առնում: Մենակ ուտողը երկար չի ուտում: Բայց այդ երկուսից որն ով էր... Ինչեւէ, իշխանը չի շեղեց:

Ահա, չորրորդն էլ կար շինարարութեան շաղախին ամրութեան համար խառնուող ձուռի գողութեան մէջ ի դերեւ հանուած կառավարիչը:

- Ապեր, լաւ չէր լինի՞՞ գինուոր գրէին, իրենց կեանքի համար թէկուզ կը կռուէին, թող թշնամին սպանէր:

- Ասում ես բոլորը գինուոր գրուե՞ն,- ծիծաղեց տանապետը:

- Աւելի լաւ չի լինի՞:

- Ու էդ տեսակ գինուորը կը կռուի: Իշխանը գիտի: Շատ բան իմանա՞ շուտ կը յոգնես կեանքից: Վատ ենք ապրու՞մ, ապերիկ:

- Չէ դէ:

- Ուրեմն՝ գործիդ մնայ:

Աշխատանքային պարհակաւոր, օրահաց աշխարհիկներն այլ տեղ էին խմբուած: Ջրագործ վարպետը, կաւէ փարչը քրտնած ձեռքին, ջրելքի գուռի վրայ էր տակաւին ակնդէտ, շարժուեց...

- Ժողովրդին ի մի բերէք,- հրահանգեց իշխանը,- շուտով կը սկսուի...

- Բիւնց: Բիւնց...

- Փառք Աստծոյ:

- Անցիր գործիդ,- ասաց իշխանը,- օծիր փրկարար ջրինովն ու անուանադիր եղիր ամրոցին:

Հօտը հովուի խօսքին է համակ ունկնդիր:

-...է դղեակ այս անտուրի կրաշէն պատեալ մեծամեծ վիմօք եւ արուարձանօք...

- Կարճ կապիր-կտրեց իշխանը,- անուանակոչիր:

- Կոչեմ ամրոցն այս... կոչեմ... Կոչաբերդ կոչեմ:

Իշխանը լարուեց, ապա դէմքը պայծառացաւ.

- Տես, որ ինքն իր մտքից առաջ է ընկնում... Վատ չի՞ Կոչաբերդ: Կոչեր ու հրահանգներ պիտի հատեղից յղուեն:

Ապա, բոլորին լսելի, խօսքն իր ասաց.

- Խոնարհ մեր ժողովուրդ եւ գինուորներ քաջագուն, ականատեսն էք մեր իշխանական հաւանութեամբ ու հայր սուրբի աստուածատուր շնորհի արգասիքով, այսուհետեւ ամրոցի այս օծմանն ու անուանանշմանը ի անուանումն Կոչաբերդ, ի փառս մեր անկորնչելի հայրենիքի եւ ի ապահովութիւն մեր հայկատուր, հնատոհմիկ համայն ազգի:

- Կոչաբերդ,- առոյգ գոչեց տէր հայրը:- Արդ այսուհետ ու յաւիտեանս յաւիտենից:

...Մարդկանց յիշողութեան մէջ սակայն պահպանուեց կոչաբերդ հնչեցումը, քանզի այնտեղ շատերին էին կոչել-ծեծել-գանակոծել, զի ականջալուր ենք դեռ պատմագիրներին, որ «...արմատացաւ անկարգութիւնը... Հիմնաւորուեց տգիտութեամբ չարափառութիւնը... ուսուցիչները տխմար ու ինքնահաւան, իրենք իրենցից պատիւ գտած... փողով ընտրուած... սուկեւէր, նախանձոտ... կրօնաւորները կեղծաւոր, ցուցամոլ, սնափառ... վիճակաւորները հպարտ, դատարկապորտ... աշակերտները սովորելու մէջ ծոյլ, սովորեցնելու մէջ փութաջան... աշխարհականներն ամբարտաւան, ստահակ... իշխանները գողերին գողակից, կաշառակեր, երկիր աւերող... դատաւորները տմարդի, խաբող, կաշառատուն...»

Հիմա Կոչաբերդում ոչինչ աւելացուած չկայ. ամայի պարիսպներն են, լանջի խիտ առ խիտ գերեզմանոցը, որ եղած աշխոյժ բնակատեղի նշան է:

... Տեսնես ո՞վ էր վերջին բերդաւորը, որ լքեց այն... Այն լքելուց առաջ դուռը փակե՞ց, թէ գնաց՝ հրաժեշտի մի հայեացք նետելով, յետ դարձի միտքը բացառած:

Նիժնի Տագիլի նախկին աքսորավայր խուլ գիւղերից մէկում հայի դիմագծերով երիտասարդը ազգանունն ասաց, ծիծաղեց.

- Հա, տարօրինակ ազգանուն է, ինքս էլ չգիտեմ՝ ինչ կը նշանակի:

- Դա պատմութիւնից յայտնի հայ իշխանական տոհմ է:

Երկար նայեց: Աչքերի մէջ թերահաւատ գարմանք կար:

- Ուրեմն տատս ճիշտ էր ասում, որ այդպիսի ժողովուրդ եղել է...

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ
Մայիս 10, 2013
ԲԵՆԻՔԱՄԻՆ ԺԱՄԿՈՋԵԱՆԻ ԳԻՐՔԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՄ
Սահակեան Սանուց Միութեան
կազմակերպութեամբ
Մանրամասնութիւնները յաջորդիւ:

ՄԵԿ ԿՐԱՄ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆԸ...

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Լիբանանի մէջ կը հրատարակուէր «ԲԺԻՇԿ» անունով ամսաթերթ մը, որ լոյս կը տեսնէր Հայ Բժիշկներու Միութեան կողմէ: Ամէն թիւի մէջ եւ առաջին էջի ճակատին վրայ կար հետեւեալ խրատ-նախադասութիւնը.

«Մէկ կրամ նախազգուշութիւնը հազար կրամ դարման կ'արժէ»:

Թէեւ առողջութեան հետ աղերսուած կը թուի ըլլալ այս խրատին դրդապատճառը, ան սակայն կարելի է ընդհանրացնել եւ գայն կիրարկել մարդկային եւ ազգային կեանքի ամէն տեսակի բնագաւառներէն ներս: Նախազգուշութիւնը արթուն եւ շրջահայեաց ըլլալու այն զգացումն է մեր մէջ, որ մեզի կու տայ ծուղակի կամ անախորժ փորձութեան մէջ չիջնալու իմաստութիւնը: Նախազգուշութիւնը այն «աչքաբացութիւնն» է մեր մէջ, որ ենթադրատակցութեամբ կը տեսնէ անկիւնէն անդին մեզի սպասող վտանգը կամ վնասը, եւ դէպի վտանգ կամ վնաս տանող ճամբէն հեռու կը պահէ մեզ: Նախազգուշութիւնը երբեմն ալ այն «ետիս գնա՛, սատանա՛» ինքնասաստումի ձայնն է մեր մէջ, որ մեզի փորձանքներէ եւ փորձութիւններէ զերծ կը պահէ: Երբ կրակ կայ դիմացնիս, պէտք է սպասել, որ բոցը մեր մօտ հասնի, որպէսզի յետոյ ցատկինք անոր վրայէն կամ կուլ երթանք անոր: Երբ հիւանդանալու կարելիութիւն կը տեսնենք, սխալ է գայն անտեսելով դէպի մահ քալել: Եւ երբ մեզմէ աւելի զօրաւորին հետ չափուիլ ուզենք, սխալ է անոր բազուկներուն ուղղութեամբ քալելով մենք զմեզ դէպի պարտութիւն տանիլ: Մեզմէ ամէն մէկու մտքի պատասխան վրայ պէտք է միշտ երեւնան մշտալոյս տառերը այս խրատին, որպէսզի հազարումէկ կտոր չըլլանք հազար դարման գտնելու ցաւի մը կամ սխալի մը.

որ կարելի էր երբեք չպատահէր, եթէ սկիզբէն զգոյշ շարժէինք կամ գործէինք: Մարդկային պատմութիւնը կը վկայէ որ մարդիկ զգոյշ չըլլալով ընթացք տուած են բռնատէրերու եւ մոլեռանդ իշխանապետերու սանձարձակ իշխանութեանց, որոնք միլիոնաւոր գոհեր պատճառել է երկիրներ ամբողջ քանդելէ ետք միայն տապալած են: Քանի եւ քանի ընտանիքներ արագ, անհաշիւ եւ անխոհեմ որոշումներ առնելով թշուառ դարձած են, եւ քանի ծնողներ իրենց զաւակներու անհոգութիւնը չճշդելով կամ չզսպելով՝ խեղճութեան ծոցին մէջը ինկած են: Նախազգուշութեամբ շարժիլ է պէտք այսօր մեր հայրենի իշխանաւորներուն, որ չուշանան լսելու մեր ժողովուրդի դժգոհ ձայնը եւ դիտեն իրենց շուրջը ու տեսնեն, թէ ինչպէ՛ս իրենց պէս երրորդ աշխարհի իշխանաւոր դասի ներկայացուցիչները, ժողովրդային պոթիվումներու գայրոյթին ենթարկուելով, անօգուտ եւ անկարելի փորձերով ելք կ'ուզեն գտնել իրենց անբաղձալի վիճակին: Նախազգուշութեամբ գործել է պէտք բոլոր անոնց, որոնք անմիջական եւ արագ շահեր հետապնդելով կը բարդացնեն իրենց ապագան կարգաւորող ընթացքը եւ կը դիզեն անլուծելի թուող հարցեր եւ ինդիքներ: Հազար կրամ դարմանով կարելի է ՅԱՃԱՆ մէկ կրամ ախտ թժլկել: Հազար կրամ փաստաթուղթով կարելի է ՅԱՃԱՆ մէկ կրամ ոճիք պաշտպանել: Հազար կրամ աշխատանքով կարելի է ՅԱՃԱՆ մէկ կրամ սխալ գործ շտկել: Սակայն մէկ կրամ մաքուր եւ առողջ կեանքով ու մէկ կրամ ուշադիր եւ անաղարտ նկարագրով ու մէկ կրամ պարկեշտ եւ քրտնաջան աշխատանքով կարելի է ՅԱՃԱՆ հազար տեսակի հիւանդութիւն եւ հազար տեսակի անօրէն վիճակ եւ հազար տեսակի անբարոյ ապրելակերպ նկատուող փորձանքներու դիմադրել եւ ախտագերծ (immune) դառնալ:

ՄԱՐԴ ԿԸ ՓՈԽՈՒԻ՞

Մարդ արարածը կը փոխուի՞ իր կեանքի ընթացքին, թէ կը մնայ նոյնը: Այս հարցը կ'արծարծուի բոլոր մշակոյթներէ ներս եւ բոլոր ժողովուրդներու մօտ, սակայն պատասխանը կը տարբերի իւրաքանչիւրին պարագային: Արեւելեան ժողովուրդները, ընդհանրապէս համոզուած են, որ մարդը կը մնայ անփոփոխ:

Հաւանաբար լսած էք հետեւեալ արտայայտութիւնները՝ «Ստախօսը կը մնայ ստախօս» կամ «Մատիս գողցողը լեռ ալ կը գողնայ»: Այս նախադասութիւնները կ'արտացոլացնեն այն համոզումը, որ մարդ ինչպէս որ է, այդպէս ալ կը մնայ: Ընդհ ինչ, որ որոշ իրականութիւն մը գոյութիւն ունի այս համոզումին մէջ, սակայն գիտութիւնը ցոյց կու տայ հակապատկերը:

Մարդիկ յաճախ ենթարկուելով կեանքի դէպքերուն կ'ազդուին անոնցմէ:

Ժամանակին առկայ էր այն համոզումը, որ մարդու ուղեղը կը դադրի աճելէ շուրջ 21 տարեկանին, որմէ ետք ուղեղի բջիջները կը սկսին հետզհետէ սկաւրանալ եւ ոչնչանալ: Տարիներու ընթացքին գիտութիւնը ցոյց տուած է, թէ մարդու ուղեղը ծնունդէն մինչեւ մահ կ'աճի եւ անընդհատ կ'ենթարկուի փոփոխութիւններու: Վերջին քանի մը տասնամեակներուն, հոգեբանութեան ոլորտէն ներս նշանաւոր դարձած է brain plasticity-ի կամ neuroplasticity-ի գաղափարը, ըստ որուն ուղեղը իւրայատուկ կարողութիւն ունի բարեփոխուելու եւ ինքզինք դարձնելու:

Ուղեղի այս յատկութեան կը նպաստեն մեր վարմունքները եւ միջավայրը, իսկ ուղեղը երբ բարեփոխուի, իր կարգին կ'ազդէ մեր մտածումներուն եւ վարմունքներուն վրայ: Երբեմն կը կարծենք, թէ երբ հարց մը դիմադրուենք անկարելի պիտի ըլլալ գայն շրջանցել, սակայն երբ հարցը պատահի, կը գարմանանք մեր կարողութիւններուն վրայ: Օրինակի համար, քաղցկեղէ տառապող մարդիկ նախքան անհանգստանալը կը կարծեն, որ անկարելի է շրջանցել քաղցկեղին ճգած հետքերը: Սակայն, քաղցկեղէ տառապող մարդոց հիւանալի համեմատութիւնը առողջ ձեւով կը պաշարի անհանգստութեան դէմ: Մեր ուղեղը իր յատուկ միջոցները ունի պահպանելու մեր հոգեկան առողջութիւնը: Այս կը հաստատէ այն գաղափարը, թէ մարդ արարածը ազդուելով կեանքի դէպքերէն կրնայ փոխուիլ: Միայն փոփոխութեամբ է, որ ուղեղը կրնայ հարցեր լուծել: Այլ խօսքով, եթէ ուղեղի աշխատանքը մնայ նոյնը՝ ոչ մէկ բան կը

փոխուի:

Ուղեղը նոյնիսկ մեր քնացած ժամանակ անդադար կ'աշխատի: Ամէնէն փոքր փորձառութիւնն իսկ կրնայ մեծապէս ազդել ուղեղի աշխատելաձեւին վրայ: Հետեւաբար, ուղեղը միշտ պատրաստ է փոփոխութեան: Մարգանքը, ընթացումը, մտերիմ գրոյցները եւ նման աշխատութիւններ կը բարեփոխեն ուղեղը: Այս բարեփոխութիւնը իր կարգին կ'ազդէ մեր բնաւորութեան եւ հետեւաբար վարմունքներուն վրայ:

Փոփոխութեան գծով տարբեր ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ մարդիկ որքան մեծնան, այնքան աւելի հանդուրժող եւ ինքնակառավարուած կը դառնան: Հետեւաբար, մարդ դանդաղօրէն կ'ենթարկուի փոփոխութեան, երբ կը ջանայ յարմարիլ կեանքի դժուարութիւններուն: Յարմարելու այս ընթացքը տեղի կ'ունենայ ծնունդէն մինչեւ մահ:

Մարդիկ հաստատ կը փոխուին իրենց կեանքի ընթացքին, սակայն փոփոխութիւն կատարելու համար կարելի է հաւատալ անոր կարելիութեան: Անհատի մը շուրջ գտնուող անձերը եւս կարելի է, որ հաւատան անձին յառաջդիմելու կարողութիւններուն, այլապէս անձը յառաջդիմելէ ետք անոնք կը շարունակեն անձին հետ վարուիլ, այնպէս ինչպէս կը վարուէին նախքան փոխուիլը: Այս երեւոյթը ոչ միայն չի քաջալերեր անձի մը փոփոխութիւնը, այլեւ կրնայ պատճառ դառնալ, որ անձը յուսահատի եւ յանձնուի:

Իրապաշտ ըլլալու համար կ'ուզենք նաեւ նշել, որ մենք ընդհանրապէս կը զգուշանանք այն անձերէն, որոնք նոյնիսկ մէկ անգամ սխալ մը կը գործեն: Օրինակ, երբ մէկը սուտ խօսի նոյնիսկ մէկ անգամ՝ կը սկսինք զգոյշ ըլլալ եւ կասկածով մօտենալ իր խօսքերուն: Այս երեւոյթը սովորական է, որովհետեւ միշտ էլ եւ դիւրութեամբ էլ, որ մարդիկ կը փոխուին: Փոփոխութիւնը կը կարօտի կամքի, ժամանակի եւ երբեմն մասնագիտական միջամտութիւններու:

Փոփոխութիւնը նաեւ տեղի կ'ունենայ, երբ սկսինք վերատեսութեան ենթարկել մեր մտածումները: Բոլորս ունինք անառողջ եւ հակակառուցողական մտածումներ, որոնք կը ստեղծեն հարցեր մեր կեանքէն ներս: Երբ փոխենք մեր մտածումները եւ մեր հայեացքը, մեր վարմունքները կ'ըլլան աւելի առողջ եւ շինիչ: Բախտաւոր ենք, որ մեր ուղեղը ունի յարմարելու իւրայատուկութիւնը, այլապէս շատ դժուար պիտի ըլլար դիմադրել կեանքի դժուարութիւնները:



SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P.O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ




Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածախանկերու եւ մանուկներու Քայրափոքրէի բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոգային եւ սկաւառի ցաւեր:
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԱՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲՈՒԺԵՆ ՍՆՆԴԱԿԱՐԳԸ ԿԱՐԳԱԻՈՐԵԼՈՎ

Ամերիկացի գիտնականները ներկայացրեցին են առաջին քան 30 հազար մարդոց շրջանակին մէջ իրենց հետազոտութիւններու արդիւնքները, եզրապահումը ընելով, որ մարդու քունին որակը կախեալ է սննդակարգէն:

Անքնութեանն էլ հիմնարկային ուղի քունի խնդիրէն կարելի է խուսափել ճիշդ սննդակարգ մշակելու օգնութեամբ: Հետազոտութիւնները պարզած են, որ ամէնէն կարճ քուն ունեցողները ամէնէն շատ Վերմոնտէրը կ'օգտագործեն: «Շատ կարճ քուն» ի խումբին անդամները ամէնէն քիչ քանակութեամբ ջուր, լիքոփին (կարմիր եւ նարնջագոյն մթերքներուն մէջ պարունակող նիւթ), եւ ածխաջրածին կ'օգտագործեն: «Կարճ քուն» ի խումբին մարդիկը ամէնէն քիչ քանակութեամբ կ'օգտագործեն Շ կենսամիւթը, ինչպէս նաեւ բաւական քիչ ջուր, սելենիում (կը պարունակուի ընկոզի, միսի եւ ծովային մթերքներու մէջ), սակայն անոնք մեծ քանակութեամբ

կ'օգտագործեն լիւթէին/գիաքսանթին (կը պարունակուի կանաչ տերեւաւոր բանջարեղէններուն մէջ):

Անոր հետ մէկտեղ երկար քունը պայամանաւորուած է թէպէտ ըմբի (կը պարունակուի թէյի ու տուրմի մէջ), տետրապեպտին (յագեցած ճարպեր) եւ քոլինի (կը պարունակուի հակիթի եւ ճարպոտ միսի տեսակներու մէջ) քիչ օգտագործմամբ, ինչպէս նաեւ ալքոհոլի մեծ քանակի օգտագործմամբ:

Իսկ 8 ժամ քնացողներուն սննդակարգը բազմազան է ու հաւասարակ շուրջ: Այսպիսով, հետազոտողներուն եզրակացութիւնը բաւական պարզ է. առողջ քուն ունենալու համար պէտք է ունենալ աւելի առողջ եւ բազմազան սննդակարգ՝ առաջին հերթին նկատի ունենալով այն մթերքները, որոնք չէին օգտագործեր կամ բաւարար քանակով չէին օգտագործեր ոչ լիարժէք քուն ունեցող խումբին անդամները:

ՊԵՏՔ ԶԷ ՀԱՍՈՋՈՒԱԾ ԼԻՆԵԼ

Շարունակուած էջ 2-էն

Թէ փորձում է անվտանգութեան ոլորտում գործընկերութեան մտադրութիւններով պայմանաւորուած արեւմտեան այդ ուշադրութիւնը վերածել քաղաքական կապիտալի Ռուսաստանի հետ յարաբերութիւններում: Դա կենսական անհրաժեշտութիւն է Հայաստանի համար, այլապէս եթէ անվտանգութեան ոլորտում չձեւաւորուի, չառարկայանայ այլընտրանքային ուղղութիւնը, դա սպառնում է Հայաստանի գիտութիւնը պարզապէս վերածել ռուսական կցորդի, որի առաքելութիւնը կը լինի ընդամենը հնարաւոր լոկալ կամ լայնածաւալ բախումներում թնդանօթի միս դառնալը:

Նախորդ տարի Դեկտեմբերին Երեւանը կարծես թէ առաջին անգամ համարձակուեց քաղաքական կոնկրետ դիտողութիւն ներկայացնել Ռուսաստանին անվտանգութեան ոլորտում Հայաստանի շահերին հակասող գործողութիւնների համար: Դա տեղի ունեցաւ Մոսկուայում ՀԱՊԿ Վեհաժողովի ժամանակ, երբ Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ ՀԱՊԿ երկրները չպէտք է անեն քայլեր, որոնք հակասում են Հայաստանի շահին:

Մարտի 12-ին կայանալիք Սարգսեան-Փութին հանդիպումն առաջինն է լինելու այդ յայտարարութիւնից յետոյ: Մինչ այդ սակայն, յատկանշական է, որ տեղեկութիւն տարածուեց Ռուսաստանի կառավարութեանը Փութինի տուած յանձնարարութեան մասին՝ մշակել եւ ստորագրել Հայաստանի հետ ռազմատեխնիկական գործակցութեան նոր համաձայնագիր: Դրանից յետոյ իհարկէ որեւէ զարգացում կարծես թէ չի եղել, թէեւ եղել են զինուորական բարձրաստիճան այցեր Ռուսաստանից Հայաստան, յատկապէս Հայաստանի նախագահի ընտրութեան նախընտրական շրջանում: Հաւանական է, որ Փութինի հետ հանդիպման ընթացքում ռազմատեխնիկական այդ համաձայնագրի ճակատագիրն աւելի որոշակիանայ:

Ուշագրաւ է, որ Սերժ Սարգսեանի Մոսկուա այցից առաջ Հայաստան էր այցելել Վրաստանի

պաշտպանութեան նախարարն ու յայտարարել, թէ Վրաստանը համոզուած է, որ Հայաստանը իր տարածքի ռուսական զէնքը թող չի տայ օգտագործել Վրաստանի դէմ: Միեւնոյն ժամանակ, այդ ընթացքում Հայաստանում տեղի է ունեցել մէկ այլ հետաքրքիր բան, որը կարծես թէ մնացել է ընդամենը արարողակարգային լրահոսի շրջանակում: Մարտի 7-ին, Վրաստանի պաշտպանութեան նախարարի այցին զուգահեռ, Հայաստանում էր Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորը, ով հանդիպել է նաեւ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը համակարծիք են եղել անվտանգութեան ոլորտում Եւրամիութեան եւ Հայաստանի գործակցութիւնը խորացնելու անհրաժեշտութեան հարցում:

Մեծ է հաւանականութիւնը, որ պաշտպանական Երեւանը կը փորձի Հայաստանի հետ անվտանգութեան ոլորտում գործակցութիւնը խորացնելու մասով արեւմտեան ուշադրութիւնն ու հետաքրքրութեամբ վերածելու վերածելով քաղաքական կապիտալի, հնարաւորինս թանկ վաճառել Ռուսաստանին կամ իրականացնել իւրօրինակ «գոյք պարտքի դիմաց» գործարք:

Բայց դա կը լինի լրջագոյն սխալ, որի համար յետագայում Հայաստանը շատ թանկ կը վճարի՝ ընդհուպ մարդկային կեանքով: Թէ որ ոլորտից կը լինեն այդ կեանքերը, պարզ չէ՝ հնարաւոր է՝ պարզապէս պաշտպանական, բայց չի բացառուում նաեւ քաղաքական: Ի վերջոյ, քաղաքական գործիչները երբեք չպէտք է վստահ կամ համոզուած լինեն, որ իրենց սխալների համար վճարելու են միայն զինուորները: Ժամանակակից աշխարհում յաճախ է պատահում, որ քաղգործիչներն իրենք են վճարում իրենց սխալների համար:

Հետեւաբար, աշխարհաքաղաքական նոր զարգացումների համատեքստում տարածաշրջանային անվտանգութեան ոլորտում գոյացող կապիտալը հարկ է վերածել բազային, ոչ թէ փոխարկելի արժէքի:

«ԼՐԱԳԻՐ»

ԱՐԴԵՕՔ ՊԵՏՔ Ե ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ո՞վ չուզեր ուրախ ըլլալ: Շատ մը մարդոց կեանքի հիմնական նպատակն է ուրախութիւնը: Ուրախ ըլլալու ծարաւը կը գտնուի իւրաքանչիւր անհատի մօտ, սակայն տարբեր ուժգնութեամբ: Եթէ պահ մը մտածէք, իսկապէս հիանալի են մեր թափած ջանքերը ուրախանալու կամ մեր ուրախութիւնը պահպանելու համար: Սակայն երբեմն մեր ժամանակը այնքան կը վատնենք ուրախութեան փնտռութիւնն էլ պահպանումին համար, որ կը մոռնանք մեր ներկան, մեր ներկայ էութիւնը եւ մեր ներկայ ուրախութիւնը: Ժամանակ մը ետք, կ'անդրադառնանք, որ ուրախութիւնը ինք կու գայ եւ կը զարնէ մեր դուները: Ժամանակ մը ետք կ'անդրադառնանք, որ ուրախութիւնը զաղտնիք չունի: Եւ կ'անդրադառնանք, որ ուրախութիւնը իւրաքանչիւր անձի համար:

Պատահական չէ, որ մարդիկ ըսած են թէ ուրախութիւնը միջոց է եւ ոչ՝ նպատակ: Թէեւ միշտ յոյսով ենք, որ ապագային աւելի ուրախ պիտի ըլլանք, սակայն կարգ մը պարագաներու ապագայի ուրախութիւնը ապահովելու համար կը կորսնցնենք մեր ներկան եւ ներկայ ուրախութիւնը: Ուրախութիւն ապահովելու պայքարին մէջ մարդ յաճախ կը ստորադասէ իր ներկան: Ուրախութիւն փնտռելու աշխատանքն աւելի կարեւոր է արժեւորել կեանքը եւ կեդրոնանալ անոր ներկայ պահերուն վրայ: Ապագան ապահովելէն աւելի անհրաժեշտ է իմանալ, թէ ո՞ւր ենք

մենք եւ մեր պայքարի ընթացքին, ի՞նչ կը ձգենք մեր ետին: Բազմաթիւ ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ մարդիկ իրենց ուրախութիւնը կը կապեն յաջողութեան: Այսինքն՝ անոնք կ'ըսեն, թէ ուրախ կ'ըլլան, երբ յաջողին իրագործել իրենց ծրագիրները: Սակայն հոգեբաններ այստեղ հարց կու տան, թէ ի՞նչ է ուրախութիւնը եւ արդեօք անոնք նոյն նշանակութիւնը եւ իմաստը ունի՞րն բոլորին մօտ:

Առաջին պարբերութեան մէջ ներկայացուցի ուրախութեան բացատրութիւններէն մէկը: Սակայն կարեւոր է նշել, որ ուրախութեան իմաստը նոյնը չէ բոլորին համար:

Ճորճ Մէյսըն համալսարանի հոգեբան Դոտ Քաշտան կ'ըսէ՝ թէ միայն ուրախութիւնը չէ, որ կեանքը կ'արժեւորէ: Ան հանրութեան ուշադրութեան կը յանձնէ հետաքրքրութեան եւ կեանքի մէջ նպատակ ունենալու կարեւորութիւնները: Հետաքրքրական է, որ Քաշտանի համաձայն՝ ուրախութիւնը կեանքի միակ նպատակը դարձնելը վտանգաւոր է, որովհետեւ կը ստեղծէ հարցեր: Ան օրինակ կու տայ ըսելով, որ մեր տրամադրութիւնը կրնայ ազդուել օգէն, որուն հետեւանքով մեր ուրախութիւնը կրնայ նուազիլ: Սակայն մեր կատարած իրագործումները չեն ազդուիր օգէն եւ թէեւ անմիջապէս ուրախութիւն չեն պարզուեր, սակայն մեզի կու տան ուժ եւ կորով՝ երկար ժամանակի վրայ բարելաւելու մեր հոգեկան առողջութիւնը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅՈՒՇԱՐՁԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ



Մրտաբուխ նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝

(626) 797-7680 կամ **(818) 429-2322** քիւերուն

Լաքալիպն, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ. որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնի կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաբաղը:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԴԱՓՆԵԿԻՐ, ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆ ՎԼԱՏԻՄԻՐ ԵՆԳԻՊԱՐԵԱՆԻ ՄԱՅՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

1956 թուականին, աստրալիական Մելբուրն քաղաքին մէջ փայլեցաւ ու անկէ ալ աշխարհի չորս կողմը տարածուեցաւ հոչակը հայ բոնցֆամարտիկ Վլատիմիր Ենգիպարեանին:

Ողիմպիական թանկագին ոսկէ մետալ նուիրած Վլատիմիր Ենգիպարեան իր աչքերը փակեց Լոս Անճելեսի մէջ, 1 Փետրուար 2013-ին: Անոր մահունը քառասուն օրեր ետք, մեր ընթերցողներէն յատկապէս մարզասէրներու ուշադրութեան կը յանձնենք Ենգիպարեանի մասին յօդուած մը, գոր գրած էր 1960-ականներու Պէյրութի ՀՄՄ-ի յայտնի ֆուրպոլիստներէն ողբացեալ Յակոբ Սարաֆեան, որ ականատեսի իր վկայութիւնը կու տայ այդ գրութեամբ, լոյս տեսած «Արարատ» օրաթերթի 4 Սեպտեմբեր 1960-ի համարին 3-րդ էջով, «Հանդիպում մ. Ենգիպարեանի հետ» խորագրով: Զ. Տ.

Իտալիոյ Մէջ ՀԱՆԴԻՊՈՒՄ Վ. ԵՆԳԻՊԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Վերջերս արտասահմանը ճանչցաւ հայրենիքի «Սպարտակ» ֆուլթպոլի խումբը, եւ որուն տարած յաղթանակներով հրճուեցաւ իւրաքանչիւր հայ:

Հազար ֆուլթպոլի վերջացած, հասաւ «Երգի Պարի Անսամպլը»:

Հոգեկան ապրումով լսեց սփիւռքահայութիւնը հայրենի կուռնկներուն գողտրիկ կանչը, յուզումի եւ ուրախութեան արցունքը աչքին:

Մէկ խօսքով ֆուլթպոլին ու «Երգի Պարի Անսամպլը» ունեցան իրենց հետ բովանդակ հայութիւնը անխտիր:

Մարզադաշտն ու իննեքոն յորդեցան ծովածաւալ բազմութեամբ, հայութիւն ներկայ եղաւ խանդավառուելու եւ քաջալերելու համար հայրենի արուեստագէտներն ու մարզիկները:

Ընդունինք որ երկու ճիւղերն ալ պէտք ունին քաջալերողներու, սակայն արուեստագէտը նուազ պէտք ունի քաջալերողի քան մրցման մէջ եղող մարզիկի մը:

Որքան ալ մարզիկի մը յաղթանակը հաւանական թուի, հանդիսատեսներու դերը մեծ է եղած իբր քաջալերող եւ իբր կորովի աղբիւր:

Այս իրականութեան ականատես եղալ անձնապէս ճանչնալով հայագրի հուշակաւոր կուսմարտիկ Ենգիպարեանը, յուզումով ներկայ ըլլալէ ետք իր մրցման:

Անակնկալ պատահականութեամբ մը իրարու ծանօթացանք Վիեննայի պողոտաներէն մէկուն վրայ, շնորհիւ իր կուրծքի հայատառ նշանին:

Կը մօտենամ իրեն, կ'ուզեմ ունենալ այդ նշանը: Անտեղեակ իր պատկանած ազգութեան, ինքզնուրակ աստրիերէնով մը հարց կու տամ իրեն. «Սթօրն Աւստրիա»:

Ձարմացած գլխու շարժումով մը ոչ կը ապտասխանէ: Կը շարունակեմ հարց տալ. «Սթօրն Ֆրէնչ, ինչի՞ր...»: Ժպտելով համարձակութեանս վրայ կրկին գլխու շարժումով

մով մը ժխտական պատասխան կու տայ:

Յուսահատած, ես ինծի հայերէն լեզուով բարձրաձայն կը բողոքեմ ըսելով. «Այս ինչ ազգի կը պատկանի արդեօք, որեւէ լեզու չի հասկնար»: Հազիւ այս խօսքերս չէր աւարտած, ողջագուրեց զիս եւ մեծապէս զգացուած ըսաւ.

«Հայ եմ, էլի ջան, ինչո՞ւ հայերէն չես խօսում: Ենգիպարեանն եմ...»:

Ուրախութեան յուզումը պատեց սիրտս: Շատ էի լսած իր մասին, սակայն մտքս չէր անցներ նման անակնկալ հանդիպում մը:

Երեք ժամեր սահած էին, մեր խօսակցութիւնը տակաւին կը շարունակուէր: Ժամացոյցին նայելով ըսաւ. «Երեկոյեան ժամը ճն է, գնամ մրցելու, եւ առաջարկեց որ ներկայ գտնուիմ իր մրցման:

Ուրախութիւնս կրկնապատկուեցաւ, երբ լսեցի որ զինք ճանչնալէ ետք, բախտն ալ պիտի ունենամ իր հանդիպման ներկայ ըլլալու:


Առանց ժամանակ կորսնցնելու կ'ուղղուինք դէպի Վիեննայի մեծագոյն սթատիոնը: Ինք կ'իջնէ հանդերձարան, իսկ ես շտապով տեղ կը գրաւեմ ռինկին մօտ երկրորդ շարքէն աթոռի մը վրայ: Երկրորդական մրցումներէ ետք, խօսնակը կ'իմացնէ երկու կուսմարտիկներու անունները:

Առաջին ռինկ բարձրացողը կ'ըլլայ Ֆինլանտացին, որ հազիւ երեւցած, ներկաներու ծափի տարափին տակ, հսկայ սթատիոնը պահ մը կը թնդայ:

Ենգիպարեան իր կարգին ռինկ կը բարձրանայ անաղմուկ: Միակ հայն եմ, որ ներկայ կ'ըլլամ այդ օրուան մրցման: Ձգացուած մարմնէս սարսուռ մը անցաւ տեսնելով այս երեւոյթը: Հայ կուսմարտիկը չունեցաւ ոչ մէկ քաջալերող:

Ձկրցայ արտասուելի, թուրջ չորցաւ բերնիս մէջ եւ սկսայ դողալ:

Մտաբերեցի հայ կուսմարտիկներու Լիբանանի մէջ ունեցած մրցումները, եւ երանի տուի անոնց, որոնք կը կուռին իրենց հայ եղ-



բայրներուն առջեւ եւ կը վայելէն լայն քաջալերանք:

Կուսմարտիկներ խոյացան իրարու վրայ: Փոխադարձ հարուածներ յաջորդեցին իրարու: Սահող վայրկեաններուն հետ կ'աւելնար սրտիս խռովքը, լսելով ամբողջ հասարակութեան պոռչուտքը, երբ ֆինլանտացին հարուածէր: Իսկ երբ Ենգիպարեան տար հարուածը, չէր լսուէր ոչ մի շշուկ:

Ձկրցայ երկար հանդուրժել այս կացութեան, կարճ վարանումէ մը ետք, իբր Հայ՝ Հայ կուսմարտիկ մը քաջալերելու համար, երկրորդ ուսունտի սկզբնաւորութեան, հազիւ կոնքը հնչած, ոտքի ելած, բոլոր ուժովս եւ խուպոտ ձայնով պոռացի. «Եալլա Ենգիպարեան»:

Կանչս իսկեց սթատիոնի լուրջութիւնը: Ձայնս արձագանգ գտաւ զարնուելով պատերուն, եւ Ենգիպարեան տեսաւ զիս, ոտքի կանգնած, ձեռքս պարզած օդին մէջ: Բոպէ մը յօնքերը պուստելէ եւ աչքերը ինձ սեւեռելէ ետք, իր բոլոր ճարտարութիւնը ի գործ դրաւ: Կարծես փարատելու համար անձկութիւնս: Մինչ այդ մեծ եղաւ զարմանքը ներկաներուն, լսելով այդ միակ ձայնը, որ կ'ելլէր, իւրաքանչիւր անգամ, որ Ենգիպարեան աղուր հարուած մը կը տեղաւորէր հակառակորդին:

Խաղի վերջաւորութեան դատաւորները միաձայնութեամբ յաղթական հռչակեցին զինք:

Հանդերձարան երթալով երբ կ'ուզէի շնորհաւորել զինք, սա

եղաւ իր արտայայտութիւնը:

«Ինչպէս տեսար, դիմացի կուսմարտիկի դէմ չեմ կուռում միայն, այլ բոլոր հասարակութեան»:

«Այսքան տիտղոսներ որ շահած եմ, ոչ մէկ հայ քաջալերող ունեցած եմ: Ինչ լաւ պիտի լինէր, եթէ հայեր ներկայ ըլլային իմ մրցմանս, եւ իրենք զիրենք հպարտ զգային հայ կուսմարտիկի մը յաղթանակով եւ չմոռնամ աւելցնել, որ մրցումներէս առաջ կը մտաբերեմ հայոց պատմութիւնը եւ այդ ոգիով կը նետուիմ կուռի»:

Անծանօթ մը չէ Ենգիպարեան միջազգային մարզաշխարհի մէջ: Օտար մամուլը գովեստով կը խօսի իր մասին:

Եւ ի տես այս իրականութեան արդեօք ո՞ր հայը պիտի չհպարտանար արժէքաւոր այս տղուն յաջողութիւններով: Արժէքաւոր է, որովհետեւ իր բոլոր արժանիքներով նաեւ համեստ է: Իր տարած յաղթանակներուն պատիւը հաւասարապէս կը բաժնէ իւրաքանչիւր հայուն:

Ներկայիս հայրենիքի մէջ լծուած է արժանաւոր յաջորդներ պատրաստելու աշխատանքին:

Իսկ 25 Օգոստոս 1960, Հինգշաբթի օրուանէ սկսեալ կը մասնակցի Հոռմի Ողիմպիական մրցումներուն, ուր համոզուած, ենք որ մեր հայրենակիցը Մելբուրնէն ետք, անգամի մը համար եւս ցոյց պիտի տայ հայ բազուկին ուժը:

Յաջողութիւն իրեն: (Արխիւ)

ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ
ՔՐԻՍՏԻՆ ԵՒ ՄԱՐԱԼ ՃՈՒԼԱԳԵԱՆ քոյրերու վարհաս մահուան առթիւ՝ «Մասիս» իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալներու ծնողքին՝ թերթիս բաժանորդներէն Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Նուէր ճուլակեանին եւ համայն ընտանեկան պարագաներուն:
Այս տխուր առիթով՝ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան կը վշտակցին հանգուցեալներու ծնողներուն եւ փոխան ծաղիկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը» կը յայտնէ իր խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս երգիչ Յարութ Յակոբեանին:

DOWNLOAD NOW

Available on the App Store

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ՝ ՄԱՐՏ 8-Ը

Շարունակուած էջ 7-էն

պարաններ ստեղծուած են ամէն տեղ, որպէսզի այդ կիրները ապաստանին հոն եւ ապահով ապրին:

Իսկ ի՞նչ ըսել յետամնաց կամ զարգացող (developing) երկիրներու մասին, ուր կիրներու ուսումնանգամ անընդունելի է: Նոր տակաւին, ինչպէս գիտենք, Աֆրիկայի պատանի աղջնակ մը զարնուեցաւ, ծանրօրէն վիրաւորուելով, միայն անոր համար որ դպրոց կ'երթար, կը սիրէր ուսանիլ եւ կը քաջալերէր ուրիշներն ալ, որ նոյնը ընեն: Վերջերս, անհաւատալի, Հնդկաստանի մէջ, բռնաբարուեցաւ բժշկութեան հետեւող երիտասարդուհի մը քանի մը զազանաբարոյ երիտասարդներու կողմէ, այն ալ հրապարակաւ, պատի մը մէջ, ճամբորդներու ներկայութեան: Այսպիսի հազարաւոր դէպքեր կը պատահին բազմաթիւ երկիրներու մէջ, մասնաւորաբար՝ Աֆրիկէի տարածքին:

Համաշխարհային կանանց այս շարժումներէն հեռու չեն մնացած նաեւ հայ կիրները: Գլխաւորաբար Պոլիսը եւ Թիֆլիսը եղած են այն կեդրոնները, ուր իրենց կարելիութեան սահմաններուն մէջ գործած եւ ջատագոված են անոնք հայ կնոջ ազատագրումը: Մասնաւորաբար պէտք է յիշել անունները մեր գրագիրուհիներէն, Սրբուհի Տիւսափը, (իր Մայտա եւ Արաքսիա վէպերով), Սիպիլ, Զապէլ Նասիբա՛նը, Հայկանոյշ Մարքը եւ մանաւանդ Շուշանիկ Կուրդինեանը, որոնք իրենց գրութիւններով, կրթական գործունէութիւններով եւ քարոզչութեամբ մեծապէս սատարեցին:

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ՆԱԵՄԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՉ

Շարունակուած էջ 13-էն

տասնամեակներ շարունակ տեղափոխ մէջ ենք: Այ, այդ մասին գրիր: Քո բարեկամ, իմ կողմից մեծապէս յարգուած, իսկապէս երաժշտագէտ կոչմանն արժանի Պետրոս Ալահայտոյեանը կարող է օգնել քեզ իր խորհուրդներով: Կամ էլ զբաղուիր միայն քո հիմնադրած «Լարք»ով, որի գործունէութիւնը ամէն գնահատանքի է արժանի:

Հայաստանում այսօր մի քանի տաղանդաւոր երիտասարդներ «ձեռք» են տալիս Կոմիտասի գործերին, նորովի ներկայացնում նրա գործերը անսամբլային տարբեր մշակումներով, զեղեցիկ գործիքաւորմամբ: Սա ի հարկէ այլ թեմա է, որին երբեք կ'անդրադառնանք:

Ինչո՞վ ուսուցիչներ չէին հին Թիֆլիսի հայաշատ Հալաբար թաղամասի հայ կինտներն ու գուռնաչիները, սազանդարներն ու աշուղները, որոնց խորապէս ազգային ժողովրդական արուեստը մեխուեց տաղանդաւոր կոմպոզիտորի երեւակայութեան մէջ ու նոր հանդերձանքով, նուագախմբային բազմերանգ գոյներով, տարբեր ոճի ստեղծագործութիւնների ձեւի տակ երեւան եկան՝ փառքով պսակելու է՛հեղինակին եւ թէ՛ իրեն ծնող ժողովրդին:

Այդ ինչպէ՞ս պատահեց բարեկամս, որ էն հեռավոր օրերին, 1937 թուականին «Ռուսական երաժշտութեամբ տոգորուած» 35 ամեայ հայ երիտասարդ կոմպոզիտորին հրաւիրեցին Հայաստան ազգային բալետ («Երջանկութիւն»-

րեցին հայ կնոջ զարթոնքին: Ապա Սիրան Սեգա Պէյրութէն, եւ Հայաստանէն Սիլվա Կապուտիկեան, Մարօ Մարգարեան, Անահիտ Սահինեան եւ այժմ տաղանդաշատ դերասանուհի եւ գրող Անահիտ Թովմեան շարունակեցին սկսուած գործը: Ներկայիս շնորհիւ ուսումնական բացարձակ ազատութեան եւ հաւասարութեան, կիրներ կան, որոնք հասած են պետական բարձր դիրքերու, ինչպէս Սփիւռքի նախարարուհի Հրանոյշ Յակոբեանն ու Մշակոյթի նախարարուհի Յասմիկ Պօղոսեանը, որոնք սքանչելի գործ կը կատարեն: Խորհրդարանին մէջ ալ ունինք պատգամաւոր-երեսփոխան գործունեայ կիրներ եւ յուսանք օր մըն ալ ունենալ մեր հանրապետութեան կրն նախագահը:

Սակայն պարզ ժողովուրդին մօտ, կան տակաւին կարգ մը այլ մարդիկ, որոնք բռնութիւն կը բանեցնեն իրենց կիրներուն վրայ, ճշգրիտ թիւով՝ 10-էն 1-ին:

ՄԱԿ-ի կեդրոնատեղիին ամենամեծ դէպքերէն մէկը՝ ինչպէս ամէն տարի, այս տարուայ կիրներու Յանձնախումբի ժողովները արդէն սկսած են Երկուշաբթիէն սկսեալ, ուր յաճախ, քաղաքական եւ ընկերային վէճերու առիթ կը ստեղծուի. 6000-է աւելի ոչ պետական կիրներու պաշտպան խումբեր արձանագրուած են այդ ժողովին, քննելու եւ բարելաւելու կիրներու վիճակը: Վատիկան, Իրան եւ ուրիշ կրօնամէտ պետութիւններ միշտ կ'ընդդիմանան անոնց:

Տակաւին շատ ճիշդ եւ պաշքար անհրաժեշտ է ջնջելու կիրներու հանդէպ բռնութիւնները:

Շարունակուած էջ 7-էն

պէս գիտութեամբ զարգացած եւ իր կոչումին գիտակից եկեղեցականն է միայն, որ կրնայ քաջութիւնը ունենալ յայտարարելու, թէ եկեղեցականներն են, որ պատճառ կը դառնան որպէսզի հաւատացեալներ հեռանան Եկեղեցիէն: Պիտի գա՞ջ օրը՝ երբ նոյնպիսի քաջարի յայտարարութիւնները լսենք մեր բարձրաստիճան եկեղեցականներու բերնէն, որոնք մոռցած իրենց կոչումն ու առաքելութիւնը, կը ստուայտին աշխարհիկ ապրումներու մէջ եւ իրենց գոյութեան նպատակը կը տեսնեն արծաթախրութեան մէջ:

Հոգեւոր պաշտօնեան իր գործունէութեամբը պէտք է վստահութիւն ներշնչէ իր ժողովուրդին: Վստահութիւնը ամենամեծ դրամագլուխներէն մէկն է մարդ արարածին, որուն կրնան կռթնիլ թէ՛ աշխարհականներ եւ թէ՛ եկեղեցականներ իրենց գործառնութեանց մէջ, ըլլան անոնք բարոյական կամ նիւթական:

Պէտք է անվարան խոստովանիլ որ մեր Եկեղեցու ժողովուրդը առհասարակ չի ներշնչուիր իր հոգեւոր պաշտօնեաններէն: Հոգեւոր պաշտօնեան տեսակ մը մեքենայ է անոնց աչքին, խորհրդակատար մը՝ պահանջուած ձեւակալութիւններ գոհացնելու համար: Սքեմաւորուիլ, եկեղեցական ձեւանալ՝ չի նշանակեր, որ ենթական հոգեւոր պաշտօնեայ դարձաւ: Կ'արժէ յիշատակել այստեղ Առակախօս Վարդան Այգեկցիի առակներէն մէկը. «Կատ-

«Սպարտակ» բալետներում: Եւ վերջում, Պարոն Վաչէ Պարսումեան, առիթ մի տուէք մեր «հարեւաններին»՝ նրանց կողմից մշտապէս ՄԵՐԸ ԻԻՐԱՑՆԵԼՈՒ մոտեցրէ մէջ: Նրանք այդ գործում

ուին փրկոն տուեր են՝ կարծեր է որ կրօնաւոր եղաւ»: Ահաւասիկ այս է այսօրուան եկեղեցականութեան սին հոգեբանութիւնը: Անոնք զաղափար իսկ չունին (բացատրութիւնները միշտ յարգելի) անձնութիւններու եւ պատասխանատուութեան մասին. ապրիլ ուրիշին համար, ծառայել անկեալին, կարօտեալին, □ ահաւասիկ իր կոչումին գիտակից, ազնիւ եւ բարի եկեղեցականին նկարագիրը, որ մագնիսի նման պիտի հրապուրէ իր հաւատացեալները եւ իր նկարագրի լոյսով պիտի լուսաւորէ գանոնք:

Զափանիչները փոխուած են եւ պէտք է փոխուին այս դարուս: Հայ եկեղեցականութեան համար չափանիշը պէտք է ըլլայ իր ժողովուրդի մտաւորական դասակարգէն վեր մտքի պատրաստութիւնը, մասնաւորաբար կրօնական գիտութեանց մէջ: Այլ խօսքով, ժողովուրդի մը բոլոր խաւերը ճանչցող, դիտող եւ հասկացող եկեղեցականութեան կարիքը ունի Հայց. Եկեղեցին, որպէսզի ոչ միայն թափուր չմնան եկեղեցույ նստարանները, այլ եւ կարենան առաջնորդել ժողովուրդը հոգեւոր կեանքի մէջ:

Միայն կրօնքի ճշմարտութիւններուն համոզուած հոգեւոր պաշտօնեան է որ պիտի կարենայ իր կենդանի խօսքերով թափանցել անտարբեր եւ թմրած հոգիներուն մէջ եւ կրթել ժողովուրդը: ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄԻ լաւագոյն օրինակը կուտայ մեզի այսօր Կարտինալ Տիմոթէոս Տոլան:

Այն որ ականջ ունի՝ թող լսէ:

ՄԵԾ ՎԱՐՊԵՏ ԵՆ: Զլինի, այնպէս, որ վաղը միւս օր ասեն, թէ Արամ Խաչատուրեանը իրենցն է: Կ'ասեն՝ կ'ասեն, ի՞նչ իմանաս, օրինակ բերելով ձեր ազգապնաս որակումները: Զգոյշ եղէք:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸՆԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸՆԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գանոնք նուիրել «Կայծ» Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

Զեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս»
Շարաքաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

INVITATION FOR BIDS (IFB) AND REQUEST FOR PROPOSALS (RFP)
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in the following opportunities:
IFB 7798 Microsoft Licenses (Issue 03/04/2013; Due 3/26/2013)
To provide Microsoft licenses/software products
RFP 7578 WAN (Wide Area Network) (Issue 03/04/2013; Due 3/29/2013)
To provide WAN connectivity
Copies of the IFB and RFP may be obtained via <http://www.hacla.org/neg/> or www.hacla.org/ps respectively or call (213) 252-5405.
3/14, 3/21/13
CNS-2452036#
MASSIS WEEKLY

«ԱՇԽԱՐՀՔՈՎ ՄԵԿ ԵՄ ԵՂԵԼ»

Շարունակուած էջ 8-էն

պէս՝ «Հոգու սով» պիտի ունենանք...»: Նա շարունակելով խօսքը՝ «Գրիշն ընտրած է պոէզիայի դժուար ժանրը, արդէն ինքնուրոյն դէմքը կերտած է եւ ունի Գրիշեան բանաստեղծական աշխարհը: Ինքնուրոյն է, ինչպէս Գ. Քրիստինեան ասաց՝ մեր կարեւոր սիրերգակներէն է...»:

Արձակագիր Կիմա Կիրակոսեանը մեծ ուրախութեամբ շնորհաւորեց հեղինակին, յիշեցրեց Կանանց Միջազգային սօնը, մաղթեց կանանց առողջութիւն, գեղեցկութիւն եւ սէր ու սէր... ապա կարդաց Նայիրա Համբարձումեանի վերլուծական գրութիւնը ուղարկուած Երեւանից Գ. Դաւթեանի գրքի առնչութեամբ:

Գեղարուեստական համեստ ծրագրում իրենց մասնակցութիւնը բերեցին քոյր եւ եղբայր՝ Ալէք եւ Անի Բերնարդի (Գ. Դաւթեանի թոռները) տաս տարեկան չքնաղ երկրեակներ: Նրանք դաշնամուրի վրայ վարժօրէն նուագեցին սոնետներ, լսարանը տպաւորուած բուռն քաջալերանքի ծափերով գնահատեց:

Ասմունքի բաժնում ելոյթ ունեցաւ Ալլին Քէշիշեանը գրքից ապրումով ընթերցումներ կատարելով, նա եւս արժանացաւ ծափերի:

Հանդիսավարը ներկայացնելով ԵՊՀ-ի դասախօս նշանաւոր բանաստեղծ դոկտ. պրոֆ. Արտեմ Յարութիւնեանին, որը Հայաստանից հիւրաբար գտնուում է Լոս Անջելոսում, ասաց՝ «Նրա խօսքը իսկապէս խորը պիտի լինի՝ գրականագիտական-այսօր մենք տեսնում ենք գործող գրականագէտը: Մենք այստեղ չունենք մեր գրական համալսարանը, նա մէկ-մէկ այստեղ գալով այդ շարժումը սկսում է»: Փրոֆեսորի խօսքը՝ «...Իսկապէս պոէզիան ունի զարմանալի ուժ, չնայած թւում է թեթեւասահ բառեր են, սակայն իրողութիւններ են հոգեւոր սիրոյ: Երբ հեղինակի գիրքն ես նայում, տեսնում ես մի ամբողջ աշխարհ կայ, որի միջով անցել է: Գ. Դաւթեանը ճակատագրի տէր բանաստեղծ է իրանից...»: Նա շարունակելով իր հակիրճ խօսքը կարճ ու կտրուկ բնորոշեց՝ «Զգայուն սրտի տէր Գ. Դաւթեանն իր այս՝ «Հրաշալի աշխարհքով մէկ եմ եղել» գրքով, վերնագիրն էլ խորիմաստ եւ զարմանալի ապրումներով...»:

Բանաստեղծ էստեր Դաւթեանը այսպէս սկսեց՝ «Յիրաւի խիստ բարի է երեկոն, քանզի մենք հաւաքուել ենք նշելու մի նոր գրքի ծնունդ, որն հետաքրքիր վերնագիր ունի, մաղթում եմ ստեղծագործական նորանոր յղացումներ»: Նրա երկար վերլուծական խօսքից բաւարարուենք այս խօսուն պարբերութեամբ՝ «...Գիրքը ներկայացնում է կեանքը եւ աշխարհը ճանաչուած ստեղծագործ տարիների շարունակ խմորող կուտակումների 129 դրսեւորումներով, իմաստալի բանաստեղծութիւններով...»:

Հանդիսավարը շնորհակալութիւն յայտնեց «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր դոկտ.

Արշակ Գազանճեանին իր ներկայութեան համար, ցանկութիւն յայտնեց այսպիսի առիթով բոլոր խմբագիրները եւ գրչի մշակները ներկայ լինեն:

Միւրուած արձակագիր Զանիբեկ Զանիբեկեանը (Կոշեցի) նրանով հանդերձ որ առողջութիւնը չէր ներուած, ներկայացել էր իր սրտաբուխ խօսքն ասելով՝ «Այս գիրքը կարգալով այնքան ոգեւորուեցի, որ չկարողացայ ինքս իմ մէջ տեղաւորուել, անմիջապէս Գրիշին յայտնեցի իմ հիացումը»: Նա մի քանի բանաստեղծութիւնների վրայ վերլուծութիւններ էր կատարել, որը կարգալով արժանացաւ գնահատանքի:

Սրտի ողջոյնի խօսքով արձակագիր Ռուբէն Քէշիշեանը մեծապէս արժեւորեց հեղինակի գիրքը ասելով՝ «Գիրքը Գրիշի սեփական պարտէզի արգասիքն է, գիրք, որ ներկայացնում է հեղինակի ջերմ գգացումների սիրոյ աշխարհը, գիրք, որ արտա-


յայտում է յոյզերն ու ապրումները, մտորումներն ու խոհերը, հայեացքներն ու մտածումները երեւոյթների մասին լոյս եւ ստուեր, գի'րք, որ արտացոլում է ծննդավայր երկրի, հօրենական տան, մանկութեան, պատանեկութեան եւ ընկերային ապրումները, վերջապէս գի'րք, որ մեզ բնութագրում է Գ. Դաւթեան բանաստեղծին իր ներքին աշխարհի երանգներով: Գնահատելի է այս հեղինակային, պատկերաւոր, ճոխ բառամթերքով գիրքը, մաղթելով մեր սիրելի գրչեղբօր քաջաւորջ եւ երկար կեանք նոր հրատարակուելիք գրքերով »: Ապա նա գնահատեց հեղինակի հասարակական եւ գրական վաստակը:

Արդէն իսկ սպառած էր ելոյթների շարանը, երբ բեմ հրաւիրուեց մեր մեծարեալը, նա իր շնորհակալական խօսքում յիշեց հանդէսի բոլոր դերակատարներին, գրչակիցներին, ընկերներին, լսարանին եւ նաեւ գրքի շապիկի ձեւաւորումը կատարող

պրն. վարդգէս Զոհրաբեանին: Նա բանաստեղծների մասին ասաց՝ «Բանաստեղծները տարօրինակ մարդիկ են, մարդկութեանը սպասարկող, մարդկութիւնը սիրող տարր են», ապա իր լուգական աշխարհի եւ իր անհատականութեան հիմնաւորման մասին ասաց՝ «Եղել է իմ հայրական տունը, իմ հայրենիքը, իմ սէրը, որոնցով կառուցել եմ իմ ընտանիքը եւ զաւակներս ու թոռներս: Ես ձեզ ասեմ, թոռներս միայն դաշնամուր չեն նուագում, նրանք երբ որ նուագում են, իմ սրտի լարերն են նուագում, այդ որ մէկդ էք, որ այդպէս չէք զգում ձեր թոռների նկատմամբ»:

Պարգապէս աւարտած էր հանդէսը, սակայն դեռ հեղինակն իր գրքերից էր ստորագրում դիմողների համար, նաեւ մարդիկ հիւրասիրութեան շուրջ-բոլորք փնջուած հանդէսի եղելութեանց շուրջ կարծիքներ էին փոխանակում:

Ուսանելի, գնահատելի եւ յիշատակելի հանդէս:




ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻԵԸ
Միտով կը հրաւիրէ ձեզ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԷՋ
Ո՞րքան յառաջիմա՞ծ ենք եւ ի՞նչ ուղղութեամբ
Կատարելագործումներն ու Չախողութիւնները

ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS
Cordially invite you

Armenian Genocide Research and Study Programs in USA
How far we have progressed and in what direction?
Achievements and Failures.



By
Professor Taner Akçam
Kaloosdian/Mugar Chair
Professor of History
Armenian Genocide Studies Clark University - Worcester, MASS.

Discussant
Professor Richard Hrair Dekmejian
Director of USC Institute of Armenian Studies
Professor of Political Science
University of Southern California

Friday, March 22, 2013 at 8 PM
OIA Center, 19726 Sherman Way, Winnetka, CA 91306
Free Admission -Lecture in English-Reception will follow

For further details please call OIA office (818) 342-0110